Azg
armenian daily

6 ՄԱՅԻՍ 1998 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 78 (1581)

Բորիս Ելցին. Կառավարության նոր կազմում վարչապետ Կիրիենկոն թերեւս ամենաստարեցը կլինի

ՄՈՍԿՎԱ, 5 ՄԱՅԻՍ, ՍՆՐՔ. Ռուսաստանի Նախագահ Բորիս Ելցինը, Կրեմլում հանդիպելով վարչապետ Սերգեյ Կիրիենկոյին, հայտարարեց, որ այսօր նախարարների խորհուրդը պետք է վերջնականապես ձեւավորվի, իսկ նրա կառուցվածքում լուրջ փոփոխություններ կկատարվեն: Առաջ, ինչպես արտահայտվեց Բորիս Ելցինը, «խայտաբղետ ասիիաան էր»՝ կառավարության նախագահ, նրա տեղակալներ, նախարարություններ, դեպարտամենտներ: Հիմա ամեն ինչը կդրվի նախարարությունների վրա, որոնց քանակը կկրճատվի, իսկ դեպարտամենտներ ընդհանրապես չեն լինի: Իսկ կառավարության աղարատը կիսով չափ կկրճատվի, հայտարարեց նախագահը:

Բորիս Ելցինը նաեւ նշեց, որ կառավարությունում հիմնականում կլինեն նոր մարդիկ, թեեւ կմնա նաեւ «հին» կադրերի մի մասը: Ընդ որում նախարարների կաբինետի նոր կազմը նախկինից ավելի երիտասարդ կլինի, իսկ վարչապետ Սերգեյ Կիրիենկոն, ինչպես հայտարարեց պետության ղեկավարը, «կառավարության կազմում, թերեւս, ամենաստարեցը կլինի»:

ԱՅԺ

Կսերտանան Լիբանան-Հայաստան կապերը

Ռաֆիկ Հարիրին Լիբանան հրավիրեց վարչապետ Արմեն Դարբինյանին

Երեկ 11:00-ին ատխատանքային այցով երեւան ժամանեց Լիբանանի Հանրապետության վարչապետ Ռաֆիկ Հարիրին, նախարարների խորհրդի քարտուղարը, քաղաքային եւ գավառական հարցերի նախարար Հակոբ Դեմերճյանը, խորհրդարանական պատգամավորներ, այդ թվում՝ Հակոբ Չուխադարյանը, Եղիա Ջերջերյանը, Ջորջ Քասարջին, Սեպուհ Հովնանյանը, Աբրահամ Դերդերյանը եւ ուրիշներ, պատասխանական այլ անձինք եւ լրագրողներ: «Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին դիմավորեցին վարչապետ Արմեն Դարբինյանը, կառավարության ատխատակազմի ղեկավար, օտերասիվ հարցերի նախարար Նահեն Կարամանուկյանը, տարածքային կառավարման նախարար Դավիթ Զադոյանը, ԱԳ փոխնախարար Սերգեյ Մանասարյանը, ՆԳ եւ ԱԱ փոխնախարար Հովհաննես Վարյանը, քաղաքապետի պատասխանատու Արեւանը, ՀՀում Լիբանանի հյուպատոսարանը, ԱԺ պատգամավորներ, քաղաքացիական ավիացիայի եւ «Զվարթնոց» օդանավակայանի պատասխանատուներ եւ բարձրաստիճան այլ անձինք: Օդանավակայանի բարձրակարգ սպասարկման սրահում Լիբանանի վարչապետը, Արմեն Դարբինյանի հետ կարճատեւ առանձնազրույցից հետո, պատասխանեց լրագրողների հարցերին: Ռաֆիկ Հարիրին ասաց կարեւորելի, որ այցը միտված է ընդհանրապես Ռոբերտ Քոչարյանին նախագահ ընտրվելու կապակցությամբ, նաեւ խորհրդակցելու հետագա հարաբերությունների զարգացման ուղղությամբ, նշելով, որ այդ առիթով ՀՀ վարչապետին կհրավիրի Լիբանան: Պրն Հարիրին միաժամանակ ընդգծեց, որ հայ-լիբանանյան տնտեսական համագործակցությունը ամուր հիմքերի վրա է եւ տնտեսության բնագավառում Լիբանանի հայ համայնքը մեծ դեր է կատարում:

Տես ► էջ 2

ԱԳՈՒԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մնացյալը կիարթի ժամանակը

Դատա-իրավական համակարգ. համայնավարությունից՝ ազատականացում



Անցյալ եռօրյան հասարակությանը պարգեւեց «Վետերանների մասին» օրենքը, ոգեւորիչ տրամադրություն ստեղծելով ԱԺ սոցիալական, առողջապահության եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովում սպասված օրինագիծը կյանքի կոչելու համար: Երեկվա արտահերթ նիստը «բենեֆիսային» էր պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի եւ, իհարկե, ԱԺ իրավաբանական ծառայության ղեկավար Վլադիմիր Նազարյանի համար: Պատճառը հիմնավոր է՝ երրորդ ընթերցմամբ ընդունվեց ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը իր երեք մասերով, եւ պրն Նազարյանը, հեղինակի իրավունքով, արժանացավ պատգամավորների շնորհավորանքին:

Սույնով կարելի է փաստել, որ արտահերթ նիստը վճռորոշ նշանակություն ունեցավ դատա-իրավական բարեփոխումների օրենսդրական դաշտի մշակման ու ապահովման գործում, հաշվի առնելով թեկուզ այն հանգամանքը, որ ընդունվեցին երրորդ ընթերցմամբ նույն համակարգի երեք այլ օրենքներ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Միջնորդ դատարանների եւ միջնորդ դատավարության մասին» եւ «Դատական անտերի հարկադիր կատարման մասին»:

Կարծում եմ, նման արագացված օրենսդրական գործընթացը թույլ կտա ԱԺ-ին սահմանադրորեն նախատեսված ժամկետում, այսինքն՝ մինչեւ նստաշրջանի ավարտը վերջակետ դնել երրորդ իշխանության բարեփոխմանը՝ համաձայն ազատական հասարակարգի պահանջներին:

Չեմ բացառում, որ պետա-իրավական բնույթի այս օրենքների առանձին դրույթները մասնագետների կողմից միանշանակ չեն ընդունվի, սակայն ակնհայտ է, որ բոլոր իրավաբաններն ու իրավագետները սպասում էին օրենսդրական դաշտի արդիականացմանը:

Տես ► էջ 3

Կոնգրեսական Շերմանի կարծիքով ԱՄՆ-ը պետք է ճանաչի Ղարաբաղի անկախությունը

ԵՐԵՎԱՆ, 5 ՄԱՅԻՍ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ-ԱՐՄԵՆՊՐԵՍ. Արեւելք-Արեւմուտք գազամուղը կամ պիտի անցնի Հայաստանի տարածքով, կամ հայկական ու ադրբեջանական ուժերի առճակատման գոտու հարեւանությամբ, եւ որպեսզի ապահովվի նավթատարի անվտանգությունը, Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի միջեւ պիտի խաղաղություն հաստատվի, հայտարարել է կոնգրեսական Բրեդ Շերմանը ԱՄՆ կոնգրեսում կայացած ունկնդրումների ժամանակ: Այդ նպատակին հասնելու լավագույն եղանակը այն կլիներ, եթե ԱՄՆ-ը ճանաչեր Լեռնային Ղարաբաղը որպես անկախ եւ ինքնիշխան պետություն եւ այնուհետեւ օգտագործեր իր հնարավորությունները Ադրբեջանի հետ խաղաղության բանակցությունները առաջ տանելու համար, ասել է նա: Այդ խաղաղությունը ոչ միայն կապահովեր տարածաշրջանի բարգավաճումը, այլեւ կօգներ մեզ բավարարելու մեր էներգետիկ կարիքները հաջորդ հարյուրամյակում:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

«Լոնդոնի բանակցությունները չլուծեցին բոլոր հիմնախնդիրները»

ԼՈՆԴՈՆ, 5 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հրաժարվեց անհապաղ համաձայնություն տալ եկող շաբաթ Վաշինգտոնում իսրայելա-պաղեստինյան բանակցությունների հերթական փուլն անցկացնելու մասին ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի առաջարկությանը: «Վաշինգտոնի հանդիպումը դեռեւս անհրաժեշտ է նախապատրաստել, այն հնարավոր կդառնա, եթե որոշակի առաջխաղացում ձեռք բերվի», հայտարարել է Իսրայելի կառավարության ղեկավարը:

Նա մամլո ասուլիս է անցկացրել վերջին երկու օրերին ԱՄՆ-ի հովանու ներքո այստեղ տեղի ունեցած իսրայելա-պաղեստինյան բանակցությունների արդյունքի ավարտից հետո:

«Լոնդոնի բանակցությունները չլուծեցին բոլոր հիմնախնդիրները, Հորդանան գետի արեւմտյան ափի տարածքի մի մասից իսրայելական զորքերի դուրսբերման երկրորդ փուլի վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերվեց», նշել է նա:

Միաժամանակ Նաթանյահուն ընդգծել է, որ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում կայացած բանակցությունների ընթացքում «առաջխաղացում է նշվել մի շարք կարեւոր ուղղություններով»:

Իսրայելի վարչապետը նաեւ հայտնել է, որ Մադլեն Օլբրայթը պատասխանատու չի առաջադրել մերձավորարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացին նոր խթան հաղորդելու ամերիկյան նախաձեռնությունը: Նա նշել է, որ իսրայելական պատվիրակության մի շարք անդամներ կմնան Լոնդոնում, որպեսզի շարունակեն կոնսուլտացիաներն ամերիկյան կողմի հետ:

Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնի է դարձել դիվանագիտական աղբյուրներից, Նաթանյահուն ձգտում է հասնել բանակցությունների օրակարգի փոփոխմանը եւ պնդում է անհապաղ անցնել դրանց եզրափակիչ փուլին, որը պետք է դնի Մերձավոր արեւելքում իրադրության համապարփակ եւ վերջնական կարգավորման պայմանների հարցը:

Նյու Յորքում ապրիլի 24-ը՝ Հայոց ցեղասպանության օր

ԵՐԵՎԱՆ, 5 ՄԱՅԻՍ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ-ԱՐՄԵՆՊՐԵՍ. Սփյուռքահայ մամուլի հաղորդման համաձայն, Նյու Յորքի քաղաքապետարանը որոշում է ընդունել ապրիլի 24-ը Նյու Յորքում պաշտոնապես ցեղասպանության օր հայտարարելու մասին: Հայտարարությունը հրապարակվել է քաղաքապետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ Սուրբ Վարդան եկեղեցուն կից սրահում կայացած հավաքի ժամանակ, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցին: Այստեղ դասապարտվել է Հայոց ցեղասպանությունը, պահանջվել միջազգայնորեն ճանաչել այն եւ Վաշինգտոնում հիմնել ցեղասպանությանը նվիրված թանգարան:

Սեփականաշնորհեք ձեր բնակարանները, քանի դեռ ուշ չէ

Երեկ խորհրդարանի արտահերթ նիստի վերջալույսին, երբ քննարկվում էր «Պետական հանրային եւ համայնքների սեփականություն հանդիսացող բնակարանային ֆոնդի մասնավորեցման մասին» օրենքը, Գեղամ Դարիբջանյանի նախաձեռնությամբ, որը կանոնակարգելու է Հայաստանում դեռեւս իրենց բնակարանների սեփականատեր չդարձած եւ պատգամավոր Պետրոս Մակեյանի բնորոշմամբ՝ ամենաընչազուրկ բնակիչների խնդիրները՝ որովհետեւ նախորդ օրենքով սահմանված ժամկետները լրացել են, եւ քաղաքացիները հայտնվում են իրենց բնակարանների սեփականության իրավունքը կորցնելու վտանգի առջեւ, նիստերի դահլիճը գրեթե դատարկ էր՝ 50-60 պատգամավոր: Բայց, 18.30-ին 102 պատգամավոր, 60-ի առկայությամբ, կողմ քվեարկեց առաջին ընթերցմամբ սեփականաշնորհման ժամկետը երկարաձգելու՝ մինչեւ 98 թ. դեկտեմբերի 31-ը, որից հետո չսեփականաշնորհված բնակարանները կանցնեն քաղաքային համայնքների սեփականությանը, իսկ Երեւանում՝ քաղաքապետարանին:

Որոշ պատգամավորներ փորձեցին ըմբոստանալ, թե ինչպես կարող են 60-ը քվեարկել 102-ի փոխարեն՝ ձայն բարբառ հանապատի: Միակ մխիթարությունը ՀՀ այն քաղաքացիների շնորհակալությունն է, որոնք այս որոշմամբ դեռ հնարավորություն կունենան բնակարանները սեփականաշնորհելու:

Ն. Դ.

ԳԵՐՄԱՆԻԱ

ԼՂՀ կարգավիճակը՝ մաքուր թղթի վրա, առանց նախապայմանների

Վարդան Օսկանյանը հանդիպեց Վիլլի Վիմերին

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բոնն

Երեկ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը հանդիպեց Կովկաս պառլամենտական խմբի նախագահ Վիլլի Վիմերի հետ: Քննարկվեցին հիմնականում ԼՂՀ հակամարտության հետ կապված Հայաստանի նոր մոտեցումները եւ հայ-թուրքական երկխոսությունում Հայաստանի դիրքորոշման մեջ հնարավոր մոդիֆիկացիաները: Նախարարության խոսնակ Արսեն Գասպարյանի տեղեկացմամբ, Ղարաբաղի հարցում առաջին հերթին կաեւորվել է ուղիղ բանակցությունների սկսումը Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ: Ադրբեջանը պիտի հասկանա, որ միայն այսպիսի ուղիղ բանակցություններով է հնարավոր առաջընթաց արձանագրել բանակցային գործընթացում: Խոսվել է, որ Հայաստանն առաջարկելու է, որ ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի եռանախագահությունն սկսի աշխատել փաթեթային տարբերակի վրա առանց նախապայմանների: Նախապայման ասելով հասկանում են Լիսաբոնի գագաթաժողովի հայտարարության սկզբունքները կազմված տարածքային ամբողջականության, հնարավոր լայն (բարձր) ինքնակառավարման: Ի սկզբանե դրանք բացառվում են: Սեր այն հարցին, թե հնարավոր չէ՞, որ ԵԱՀԿ-ն մերժի Հայաստանի առաջարկը, պրն Գասպարյանն ասաց, թե դրա մասին էլ է խոսվել Կովկաս պառլամենտական խմբի նախագահի հետ: Պրն Օսկանյանը նշել է, որ Լիսաբոնի գագաթաժողովի հայտարարությամբ ԵԱՀԿ-ն միակողմանի աջակցություն ցույց տվեց Ադրբեջանին դրանով կարծրացնելով վերջինիս դիրքորոշումը:

Տես ► էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ԸՆԹԱՑԻԿ
ԱՅԺ

Կարտանան Հայաստան-Լիբանան կապերը

Սկիզբը էջ 1

Այնուհետեւ պատվիրակությունը մեկնեց կառավարության շենք, ուր կայացավ Արմեն Դարբինյանի ու Ռաֆիկ Հարիրիի երկրորդ առանձնազրույցը: Օգտագործելով կարճատեւ ընդմիջումը, լրագրողներս ծեղազրույցներ անցկացրեցինք Լիբանանի խորհրդարանականների հետ: Եղիա Ջերջյանը ներկայացնելով հայ-լիբանանյան խորհրդարանական հարաբերությունները, նշեց, որ միջպետական հարաբերությունները դեռեւս մեկ տարվա վաղեմություն ունեն եւ սա երրորդ պաշտոնական այցելությունն է Հայաստան: ՀՀ նախկին վարչապետը եւ ԱԳ նախկին նախարարը եւս այցելել են Լիբանան, որի ընթացքում կնքվել են ութ համաձայնագրեր, որոնցից չորսը Լիբանանի խորհրդարանի կողմից արդեն վավերացվել են: Դրանք առնչվում են օդային հաղորդակցությանը, տուրիզմին եւ այլ ոլորտներին: Վերջին մեր մեկ ամսվա մակույթի մասնավորապես Հայաստանում արաբական լեզվին, Լիբանանում հայերեն լեզուն զարգացնելու մասին եւս փոխհամաձայնագիր է վավերացվել:

Անդրադառնալով բուրֆ-իսրայելական առանցքին, նշվեց, որ «Իսրայելն ու Թուրքիան վերջերս կնքեցին համաձայնագիր, Միջերկրական ծովի վրա անցկացրեցին զինվորական զորավարժություններ: Հայտնի է, որ Իսրայելն արաբական երկրների թշնամին է, իսկ Թուրքիան պատմականորեն Հայաստանի, եւ երբ թշնամիները միանում են, բնական է, որ մենք եւս պետք է միանանք»: Սակայն, միաժամանակ ընդգծեց, որ «առայժմ ռազմական համագործակցության վերաբերյալ որեւէ բան չկա»: Անդրադառնալով տնտեսական փոխհամագործակցությանը նշեց, որ կնքված է ՀՀ-ում Լիբանանի դրամատուն հիմնադրելու ծրագիր, կարծիք հայտնելով, որ Հայաստանի համար մեծ օժանդակություն կլինի դա, քանի որ Լիբանանը դրամատնային ցանցի մեծ փորձ ունի: Փորձի փոխանակում է տարվում տուրիզմի բնագավառում, քանզի Լիբանանը հայտնի է նաեւ որպես ծառայողական սերվիսի երկիր:

Վերջում պրն Ջերջյանը նշեց, որ խորհրդարանում եւ խորհրդարանից դուրս հայ ժողովրդի անցյալի, ցեղասպանության, հայ դատի, մշակույթի վերաբերյալ պետական մակարդակով լոբբիստական աշխատանքներ տարվել են ոչ միայն այսօր, այլեւ Հայաստանի անկախությունից առաջ եւս:

Ռաֆիկ Հարիրիին ուղեկցող պատվիրակության կազմում էին նաեւ Լիբանանի խաղաղային եւ գավառական հարցերի (տեղական ինքնակառավարման) նախարար Հակոբ Դեմիրճյանը (ներկայումս սանձնել է նաեւ գյուղատնտեսության նախարարության պատասխանատվությունը) եւ խորհրդարանի հայազգի պատգամավոր Ջորջ Քասարջին, որոնց հետ «Ազգը» նախընտրեց էքսկլյուզիվ հարցազրույց:

– Պրն Դեմիրճյան, ինչպե՞ս կգնահատեք հայ-լիբանանյան հարաբերությունները:

– Դրանք սերտ են, վարչապետ Ռաֆիկ Հարիրիի ժամանման նպատակը ներկայիս հարաբերությունների առավել սերտացումն ու զորացումն է: Մեր հարաբերություններն, անշուշտ, սաղմնային վիճակի մեջ են եւ ասիմանաբար ՀՀ-ի եւ Լիբանանի միջեւ կցանականք զարգացնել տնտեսական եւ զանազան այլ ոլորտները: Արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվողներն ուսումնասիրում են զարգացման հնարավոր ուղիները եւ ես հուսով եմ, որ աղագայում մեր հարաբերություններն առավել կկատարելագործվեն:

Հարցի վերաբերյալ խորհրդարանական Ջորջ Քասարջին նշեց.

– Հարաբերությունները մինչ օրս շատ լավ են եղել եւ Հայաստանում կատարված նոր փոփոխությունները, կարծում եմ, առավել արդյունավետ կլինեն: Լիբանանի հայությունը արտանց ցանկանում է հնարավորին չափով օգտակար լինել Հայաստանին՝ համագործակցության բոլոր բնագավառներում: Այսօրվա այցը միայն նախագահ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորելու նպատակն է հետապնդում, բայց աղագայում բավականին նորություններ են սպասվում:

– Պրն Դեմիրճյան, տնտեսական հարաբերությունների բնագավառում ի՞նչ խոչընդոտներ կան:

– Մինչեւ հիմա մասնավոր խոչընդոտներ չեն եղել, բայց որեւէ նախաձեռնություն ժամանակ է պահանջում եւ, զանազան նախարարների հանդիպումները միմյանց հետ կարող են նպաստել ծրագրերի մշակմանն ու հարաբերությունների զարգացմանը: Տասը տարի առաջ մեր միջեւ տնտեսական հարաբերություններ գրեթե չկային, իսկ ներկայումս եւ հետագայում եւս տնտեսական հարաբերությունների հարատեւ զարգացում պետք է լինի:

– Կա՞ն կոնկրետ ծրագրեր:

– Անցյալ անգամ ՀՀ վարչապետի Լիբանան այցի ընթացքում կնքվել են համաձայնագրեր, որոնք երկկողմ մշակման փուլում են: Դրանք ֆինանսական ոլորտի եւ կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրեր են, որպեսզի ներդրողները երկու երկրներում էլ պաշտպանված լինեն:

– Լիբանանի խորհրդարանում հայ դատի ուղղությամբ լոբբիստական ի՞նչ աշխատանքներ են տարվում:

– Քաղաքական հարցով նախընտրում եմ չխոսել, բայց խորհրդարանում 7 հայ երեսփոխան ունենք եւ յուրաքանչյուրն էլ հայ դատը մոռացության չմատնելու եւ պաշտպանելու ուղղությամբ աշխատանքներ է տանում: Լիբանանի կառավարությունը, նաեւ քաղաքական գործիչները, համոզված են, որ հայ դատն արդար է, հետեւաբար աշխատանքներ տարվում են:

– Պարոն Քասարջի, տնտեսական համագործակցության բնագավառում հետագա ծրագրերը որո՞նք են:

– Մենք բոլոր ջանքերը կգործադրենք Հայաստանի հետ մեր հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Կկազմակերպենք տնտեսության եւ այլ ոլորտների համագործակցության վերաբերյալ համապատասխան խմբեր՝ Հայաստանին օգտակար լինելու համար: Ինչպես հայտնի է, անցյալ տարի Լիբանանի կառավարությունն ընդունեց նաեւ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցը:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Ղարաբաղյան եւ աբխազական հակամարտությունները սկզբունքորեն տարբեր են

«ԼՂՀ եւ աբխազական հակամարտությունների կարգավորման հանդեպ անընդունելի է միեւնույն մոտեցումների կիրառումը, որովհետեւ նրանց ծագումնաբանությունը բոլորովին այլ է: Միակ ընդհանրությունն այն է, որ այն վերաբերում է ժողովուրդների հարաբերությունների կարգավորմանը», այս սկզբունքը ճանաչվել է իբրեւ ելակետային Թբիլիսիում կայացած հայ եւ վրաց խորհրդարանականների հանդիպման ժամանակ: Ինչպես հավաստեց ԱԺ նախագահի նորանշանակ խորհրդական Վահագն Մկրտչյանը, որը մինչեւ վերջերս զբաղեցնում էր ԱԺ մամուլի ծառայության ղեկավարի պաշտոնը, Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ հայաստանյան պատգամավորների այցելությունը Վրաստան արդյունավետ է եղել՝ տարածաշրջանային անվտանգության հայեցակարգը մշակելու եւ Հայաստան-Վրաստան երկկողմ հարաբերությունները գործնական դարձնելու ուղղությամբ:

Հայաստան-Վրաստան հարաբերությունները թղթային մակարդակում

ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը Վրաստանում նշել է, որ գործադիր աշխատանքից անցնելով քաղաքականության, ինքն ամենակարեւորն է համարում համագործակցությունը թղթային մակարդակից բարձրացնելը: Մինչ այսօր կնքված երկկողմ հարաբերություններին վերաբերող 70 պայմանագրերից վավերացված են 43-ը, իսկ այդ վավերացվածներից շատերն էլ գործնականում չեն կիրառվում: Հայ խորհրդարանական պատվիրակությունը կարեւորել է Անդրկովկասում ընդհանուր տնտեսական շուկա ձեւավորելու խնդիրը, որը կդյուրացնի մեր տարածաշրջան միջազգային ներդնողների գալուստը: Սակայն փաստն այն է, որ Վրաստանում հայ տնտեսավարողների հանդեպ կիրառվում է մաքսային եւ հարկային շատ ավելի խիստ քաղաքականություն, քան արդեն ձեւավորված Վրաստան-Ուկրաինա-Ադրբեջան-Սոլոդովա (UEFV) քառյակ դաշինքի անդամ տնտեսավարողների հանդեպ: Այսպես կոչված UEFV-ի տնտեսավարողների համար սահմանված է հարկային եւ մաքսային սակագների ավելի ընդունելի կարգ, քան Հայաստանի: Բացի պաշտոնական մաքսային եւ հարկային քաղաքականությունից, Վրաստանի տարածքում գործում են տարաբնույթ խմբավորումներ, որոնք տաժանելի են դարձնում հայ տնտեսավարող ձեռնարկությունների բեռնափոխադրումները՝ նկատի ունենք ահաբեկումներով ուղեկցվող դրամաշորթությունները, կողոպուտները: Այսօր արդեն Թբիլիսի է գործուղվել ՀՀ տրանսպորտի նախարարը, մաքսային վարչության պետ Միքայել Մակարյանը եւս կայցելի Թբիլիսի՝ մշակելու համար Հայաստանի վրայով դեպի Արեւելք Վրաստանի տարածման ճանապարհը, իսկ մեզ համար Վրաստանի միջոցով Արեւելյան Եվրոպայի երկրների հետ ուղղակի հաղորդակցություն հաստատելու քաղաքականությունը՝ Հայաստան-Վրաստան-Ռումինիա, Հայաստան-Վրաստան-Բուլղարիա հաղորդակցման ուղղություններն արդեն ուրվագծվում են: Քննարկվել է նաեւ մետալուրգիայի եւ քիմիայի արտադրության ոլորտում հայ-վրացական համագործակցության հեռանկարը: Վրաստանը մեզ համար եւ ճանապարհ է դեպի արտերկիր, եւ տնտեսական գործընկեր:

Ընդհանուր կովկասյան շուկա

Պայմանականորեն Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեին վերագրվող այս գաղափարն ընդունելի է Հայաստանի համար, սակայն տարածաշրջանում անվտանգության հայեցակարգը պետք է ճշգրտվի: Միավորման ցանկացած քայլ, որը կհակասի անդրկովկասյան հանրապետություններից որեւէ մեկի շահերին, չի կարող հաջողել. «Որեւէ պետության շահերի անտեսումը հղի է վտանգներով կամ այդ միավորման ձախողմամբ: Հայաստանի պատգամավորների այս տեսակետը վրացական կողմը պատշաճեց, ասելով Վրաստանը չի ընդունի որեւէ ծրագիր, ուր անտեսված կլինի հայկական գործոնը, եւ պետք չէ տարածաշրջանում լարվածությունների նոր առիթ տալ», եզրափակեց Վահագն Մկրտչյանը: Վրաստանը շահեկան իրավիճակում է, քանզի նա դրական հարաբերություններ ունի եւ Ադրբեջանի, եւ Հայաստանի հետ, ուստի նա ունի նաեւ լուրջ առաքելություն Այսրկովկասում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Աբխազիայում բռնկված հակամարտությունը, ինչպես շեշտեցինք, ուղիղ համեմատական չէ ԼՂՀ հիմնահարցին: Հայաստանյան պատվիրակությունը հանդիպելով «Աբխազիա» ընդդիմադիր խմբակցության ղեկավար Վ. Կոլբայի հետ, նշել է, որ մենք պաշտպանում ենք փախստականների վերադարձը Աբխազիա՝ չմոռանալով, որ վերադառնալու հեռանկարը վերաբերում է նաեւ բազմաթիվ հայազգի փախստականների: Թեեւ վրաց ընդդիմադիր կուսակցությունները փորձել են հայկական պատվիրակությանը մեղադրել՝ վկայակոչելով աբխազահայության մի հատվածի զինյալ աջակցությունը աբխազներին, բայց կան փաստեր, որոնք ապացուցում են, թե աբխազամետ կողմնորոշումը միակը չի եղել եւ աբխազահայության մյուս հատվածը հանդես է եկել Վրաստանի կողմից ընդդեմ աբխազների, փաստացի հայը հայի դեմ:

Խոսրով Հարությունյանը դատապարտել է շրջափակումների կիրառումը՝ իբրեւ քաղաքական հարաբերությունների կարգավորման եղանակ: Ցանկացած շրջափակում ավելի է խորացնում հակամարտությունները. «Որպես հակամարտություններում օգտագործվող չարդարացված փաստարկ, շրջափակումը պետք է դուրս բերվի միջազգային պրակտիկայից», ասել է նա Վրաստանի խորհրդարանում ունեցած իր ելույթի ժամանակ:

ՆԱԲԻԼԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԼՂՀ կարգավիճակը՝ մաքուր թղթի վրա, առանց նախապայմանների

Սկիզբը էջ 1

Մինչեւ Լիսաբոնն ակտիվ բանակցային գործընթաց կար, իսկ դրանից հետո միայն մեկ հանդիպում 1997 թ. ծմռանը, երկու օրով Մոսկվայում: Հիմա բանակցային գործընթացի փոխարեն կա փակուղի, որից դուրս գալու համար Հայաստանը իրոք շահագրգռված է, որ հակամարտությունը կարգավորվի հնարավորին շուտ, ասել է պարոն Օսկանյանը: Մենք ուզում ենք իրերն անվանել իրենց անուններով՝ կարծելով, թե դա կնպաստի բանակցային գործընթացի վերսկսմանը եւ հետագա առաջխաղացմանը, շարունակել է ՀՀ արտգործնախարարը: Հայաստանը պիտի ակտիվորեն ներգրավված լինի հակամարտության կարգավորման գործում, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պիտի մշակվի մաքուր թղթի վրա: Այդ կարգավիճակը պիտի բարձր լինի ԵԱՀԿ ցայժմ ընդունված այն կարգավիճակներից, որոնք ընդունելի չեն եղել հայության համար: Հայաստանը եւ Ղարաբաղը ճանաչում են միայն հորիզոնական կապերի հաստատում:

Պրն Վիմերի հետ քննարկվել է նաեւ հայ-թուրքական երկկողմ դիվանագիտական հարաբերությունների խնդիրը: Վիլլի Վիմերը հետաքրքրվել է, թե ինչ հնարավոր փոփոխություն կարող են գրանցվել Հայաստանի մոտեցումներում՝ հաշվի առնելով, որ Հայաստանն արդեն դրել է ցեղասպանության ճանաչման խնդիրն իբրեւ արտաքին քաղաքականության օրակարգի հարց: ՀՀ արտգործնախարարը նշել է, որ մինչեւ հիմա միակողմանի է եղել կապը. Հայաստանը միշտ էլ առաջարկել է Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, բացել սահմանները, սակայն Թուրքիան միշտ մերժել է հարցը կապելով ԼՂՀ հակամարտության հետ: Եթե Թուրքիան շարունակի նույն քաղաքականությունը՝ մերժել դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, չվերացնի շրջափակումը, չբացի սահմանները, Հայաստանի կողմից չի կարող դրական վերաբերմունք ակնկալել: Այդ երկխոսությունը պիտի կառուցված լինի փոխադարձ երկխոսության վրա, նշել է Վարդան Օսկանյանը:

Ճշտում. *Մեր թերթի ապրիլի 29-ի համարում՝ համալսարանում տեղի ունեցած գիտաժողովի մասին պատմող հոդվածում («Երկու գրական հայերենները երկու քույրեր են...»), սխալ է ցավալի սխալ, որի համար ներողություն ենք խնդրում: Վ. Բրյուսովի անվան ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ Ֆրիդրիխ Խլղաթյանի «Մեկ ազգ՝ երկու գրական լեզու, երկու ուղղագրություն» ծեւակերպումը տպագրվել է «կա երկու ազգ, երկու լեզու, երկու ուղղագրություն» ձեւով:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

Սկիզբը էջ 1

Այդ առումով վկայակոչեմ իրավաբան եւ իրավագետ Պուշկին Սերոբյանին, որը, ինչպես շատ մասնագետներ, ուշադրությամբ հետեւում է նոր օրենքների ընդունմանը:

"Ըստ դրն Սերոբյանի, ունենալով լիովին նորոգված ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, մյուս օրենքների փաթեթը, «Հայաստանը ազատվեց կոմունիստական համակարգի կողմից մեզ փաթաթված իրավական համալիրից, որը դարի դաշտում կարող է հանդես գալ եւ իրավաղահորդան հասարակական որեւէ կազմակերպություն, սակայն օրենքն այս տարբերակը չի ամրագրում: Այդ առումով, ըստ դրն Սերոբյանի, դատավորի կարգավիճակը կանոնակարգող օրենքը արժանի է ծափահարության, քանի որ օժտում է դատավորներին կատարյալ ազատություններով:

Որդես լրագրող չեմ կիսում դրն Սերոբյանի ոգեւորությունը դատավորների անսպառ ազատությունների կաղակցությամբ, քանի որ օրենքը դոները փակում է անգամ դատական գործին իրազեկ դառնալու ցանկություն ունեցող մամուլի առջեւ:

Սակայն, լցվենք լավատեսությամբ, հուսով աղրելով, որ ժամանակի ընթացքում ոչ ճգրիտ մոտեցումները ակնհայտ կդառնան եւ կարագրվեն: Կարեւորը, երեւի թե, այն է, որ դատաիրավական ոլորտում համակարգային անցումը համայնավարությունից ազատականություն, կարծես, իրագործվում է:

«Վաշխառուները» կմղվեն դուրս

«Եկամտահարկի մասին» եւ «Շահութահարկի մասին» օրենքներում կատարվեցին փոփոխություններ, որոնք, ըստ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանի, կոչված են էլ ավելի դյուրացնել հարկային համակարգը խթանելով ներդրումների հոսքը Հայաստան եւ շահագրգռելով հայաստանաբնակներին համագործակցելու բանկային համակարգի հետ:

Դիցուք «Եկամտահարկի մասին» օրենքի համաձայն, այլեւս չեն հարկվի ռեզիդենտների ավանդները բանկերում եւ ՀՀ քաղաքացիներն արտասահմանցիների օրինակով շահագրգռված կլինեն դրանք փողերը ոչ թե բարձի տակ, այլ բանկերում: Այսպիսով, բնակչության խնայողությունները եւս կդիտվեն որպես ներդրումների աղբյուր:

Երեւի թե այդ աղբյուրը դեռ սակավաջուր կլինի, սակայն հայտնի է՝ օրենքը մեկ օրվա համար չի գրվում: Այնպես որ, ինչքան լավ աղրենք այնքան շատ ներդնողներ կունենանք եւ չենք դիմի «զուգահեռ բանկային համակարգին, այլ կերդ ասած՝ վաշխառուներին, ադահով լինելով ներդրված գումարներից:

Հիշատակելով վաշխառուներին, ասեմ, որ ստվերային «բանկային» համակարգը դեռ երկար ժամանակ չի վերանա, առաջինը՝ դեսբանկերի ցածր տոկոսադրույքի դատճառով, երկրորդը՝ բանկից վարկ վերցնելու դեմքում գրավ դահանջելու դատճառով: Իսկ վաշխառուները մերընդմերթ անտեսում են գրավի դարագան: Դե ինչ, հույսներս դնենք ժամանակի վրա, որը, երեւի թե, ամեն ինչ կհարթի:

«Շահութահարկի մասին» օրենքի փոփոխություններն ու լրացումները դյուրացնում են արտասահմանյան ներդրումների հոսքը Հայաստան լոկ նրանով, որ ժամկետավորում են շահութահարկից ազատելու հանգամանքը: Արտոնությունների ռեժիմը օտարերկրյա ներդնողների համար, ըստ օրենքի, այսօր եւ վաղը բարենդաստ կլինի շահութահարկից կազատվեն: Բայց, ասենք, տասը տարի անց արտոնությունները չեն գործի:

Օրենքով կանոնակարգվում են եւ հարկային որոշ թերություններ կազված անցումային շրջանի հետ:

Անդրադառնալով հարկային ոլորտակարգը կատարագրող օրենքներին, հիշատակեմ, որ հարկային արտոնություններ սահմանվեցին նաեւ Երեւանի «Կոնյակի գործարան» դեսական ձեռնարկության համար:

Այս եւ բոլոր մնացած օրենքներն ընդունվեցին առանց որեւէ ձգձգումների: Ավելին, դահլիճը սակավաթիվ լինելով, էլեկտրոնային ցուցանակը զարմանալիորեն ի հայտ էր բերում դատգամավորական բանակի մի հոծ բազմություն: Սակայն այդ կարգի հրաշքներին ԱԺ-ում հավատարմագրված լրագրողները քաջ տեղյակ են եւ այլեւս չեն զարմանում որոշ ընտրյալների ունակությանը՝ վարդեստորեն սեղմելու կոճակների մեծ քանակ:

Շ. Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մնացյալը կհարթի ժամանակը

միայն մի առաքելություն ուներ՝ ծառայել ռեժիմին»: Այժմ օրենսդրությունը սկզբունքային նորարարություն է առաջարկում դատարանների կազմակերպման մակարդակի, ձեւերի, մեթոդների առումով: Ունենանք երկու աստիճան դատարան, եռաստիճան դատարաններ կունենանք: Այս զտիչ համակարգը, իհարկե, կնդասի քաղաքացիների օրինական իրավունքների դաշտպանմանը եւ ադահովմանը:

Մյուս կողմից, դատախազության իրավասությունները եւս համադատասխանեցվում են սահմանադրական դահանջներին: Դատախազությունը ներկայացվում է որդես ինքնուրույն մարմին, որը կատարում է միայն իր վրա դրված դարտականությունները, ձերբազատվելով «ամբողջատիրական» դեւից ստացել ու վերահսկել ցանկացած դարտ ու բնագավառ: Ընդհանուր ոգդությամբ գաղափարը արդարացի վերանում է:

Դատաիրավական համակարգի բարեփոխումներ ասելով դետք է նկատի ունենալ եւ փաստաբանական ծառայությունը: Համադատասխան օրենքում վիճահարույց է փաստաբանական կոլեգիայում իրավաբանի ներգրավվելու հարցը որդես դայման դատաքաշդանի մասնագիտական զբաղմունքի: Այսինքն, «ականջ դտրդի, մաս բաժ տվողի» դերը նորից դահանջված է, ինչը, ըստ դրն Սերոբյանի, ընդունելի չէ ազատականացված հասարակարգում: «Աղվոկատուրան» դետք է լինի լրիվ անկախ եւ միայն դահանջարկն ու առաջարկը կարող են որակավորել մասնագետի արհեստավարժության աստիճանը:

Բացի այդ, մարդու իրավունքների դաշտպանության կարող է հանդես գալ եւ իրավաղահորդան հասարակական որեւէ կազմակերպություն, սակայն օրենքն այս տարբերակը չի ամրագրում: Այդ առումով, ըստ դրն Սերոբյանի, դատավորի կարգավիճակը կանոնակարգող օրենքը արժանի է ծափահարության, քանի որ օժտում է դատավորներին կատարյալ ազատություններով:

Որդես լրագրող չեմ կիսում դրն Սերոբյանի ոգեւորությունը դատավորների անսպառ ազատությունների կաղակցությամբ, քանի որ

ԿՐՈՆԱԿԱՆ

Հայ եկեղեցու Ամերիկայի թեմի մեկ դարը

«Ազգը» տեղեկացրել է, որ Նյու Յորքում սկսվում են Հայ առաքելական եկեղեցու առաջին (արեւելյան) թեմի 100-ամյա հոբելյանին նվիրված հանդիսությունները՝ մայիսի 3-ին Նյու Յորքի Սբ. Վարդան մայր տաճարում Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի ընդունելության Հրաշափառի երգեցողությամբ: Բուն հանդիսությունները, սակայն, նախատեսված են մայիսի 7-10-ին: Մասնավորապես մայիսի 9-ին հազարավոր ամերիկահայեր կանցնեն էլիս կղզու մեծ սրահով, որով ժամանակին Նոր աշխարհ են ժամանել նրանց նախնիները: Այդ հուզիչ արարողությունը կոչված է խորհրդանշելու սերունդների կապը, ոգեկոչելու նրանց հիշատակը, ովքեր, Մեծ եղեռնից մազապուրծ, հանգրվանեցին Միացյալ Նահանգներում՝ հիմնելով հայկական ամենաշեն եւ ծաղկուն գաղութներից մեկը, որ այսօր օգնության ձեռք է մեկնում հայոց մյուս, այդ թվում հայաստանյան թեմերին: Տոնական միջոցառումների շարքում կգումարվի թեմական ամենամյա ժողովը, իսկ կիրակի օրը՝ մայիսի 10-ին, կմատուցվի դատարագ:

Հանդիսություններին կմասնակցի Արեւելյան թեմի Հայ օգնության Ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Վիգեն Եդս. Այվազյանը, որը երեկ ատուլիսի էր հրավիրել լրագրողներին՝ ի նշանավորումն հիշարժան տարելիցի: Արքազանը, չմոռանալով լրագրողներին շնորհավորել մամուլի միջազգային օրվա՝ մայիսի 5-ի առթիվ, ներկայացրեց տոնակատարության ծրագիրը, Արեւելյան թեմի անցած ուղին՝ կարեւորելով հայ եկեղեցու տեղն ու դերը ոչ միայն ամերիկահայ գաղութի ներհամայնքային հոգեւոր-մշակութային կյանքում, այլեւ, ՀՕՖ ուղիներով, Հայաստանի ժողովրդին նյութապես հաջալերելու գործում: 1988-ի երկրաշարժից ի վեր ՀՕՖ-ը շուրջ (գրեթե 150 մլն դոլարի) նպաստ է բերել դժվարին ժամանակներ ապրող մեր հայրենակիցներին:

Արեւելյան թեմը Միացյալ Նահանգներում հիմնվել է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկի) կողմից: Առաջին եկեղեցին, սակայն, կառուցվել է ավելի վաղ՝ 1981-ին Ուորչեսթերում (Մասաչուսեթսի նահանգ): Առաջնորդանիստ քաղաքը Նյու Յորքն է, որի կենտրոնում 1968 թ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից օծվել է Սուրբ Վարդան մայր տաճարը: Եկեղեցուն կից գործում են Գյուլբենկյան մշակութային կենտրոնը, առաջնորդարանը, քանգարանը, Հայկ եւ Ալիս Գավուճյան սրահը, Գրիգոր եւ Կլարա Զոհրաբ տեղեկատվական կենտրոնը, քրիստոնեական դաստիարակության, հայ լեզվի եւ՝ մշակույթի, երիտասարդության, ընկերային ծառայության եւ այլ կենտրոններ: Հոգեւոր համայնքերի (ծխերի) թիվը հասնում է 60-ի:

Լ. Պ.

Սահմանադրության բարեփոխումը դեռ անորոշ է

Շեպազրույց Վլ. Նազարյանի եւ Արթուր Բաղդասարյանի հետ

Ազգ դետաիրավական հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը եւ իրավական ծառայության դեկավար Վլադիմիր Նազարյանը երեկ լրագրողներին ավետեցին դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի ավարտը՝ խորհրդարանը վավերացրեց քաղաքացիական օրենսգիրքը, որ Վլադիմիր Նազարյանը համարեց բարեկեցիկ, ազատ ադրելու կյանքի Աստվածատունչը: Եթե հրեական, հրեական դատավարական օրենսգրքերը կարգավորում են քաղաքացիների եւ մարդկանց միջեւ ծագող բացասական հարաբերությունները, ապա Քաղաքացիական օրենսգիրքը կանոնակարգում է դրական, դեմքի տնտեսական զարգացում եւ քաղաքակիրթ տուկայի հիմնում ուղղված հարաբերությունները, քաղաքացիական հասարակության ստեղծումը: Վլադիմիր Նազարյանը դերձախոս եւ Նաղդեոն Բոնապարտի ընդունած քաղաքացիական օրենսգիրքը համարեց Ֆրանսիական ժողովրդի բարեկեցության համար շատ ավելի կարեւոր, քան հետագայում ընդունված 11 սահմանադրությունները:

Հայաստանն առայժմ ունի 1 Սահմանադրություն՝ հեղինակությամբ Վ. Նազարյանի, որը կարոտ է հրատապ բարեփոխման, եւ նոր քաղաքացիական օրենսգիրքն դարձյալ դրն Նազարյանի գործուն համահեղինակությամբ: Այն, Արթուր Բաղդասարյանի հավաստմամբ, ամենակատարյալը չէ, բայց անցել է 6 միջազգային փորձաքննություն: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ունի 12 բաժին, եւ 81 գլխում ամրագրված է շուրջ 1300 հոդված: Նախագիծը ծնունդն է ինչպես Հայաստանի իրավագիտական մտքի, այնպես էլ գործադիր իշխանության՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության, Կենտրոնական բանկի, ինչպես նաեւ առեւտրային բանկերի իրավաբանական ծառայությունների, Ազգային ժողովի եւ բազում այլ արհեստավարժ մասնագետների:

Վլադիմիր Նազարյանին, սակայն, հարց ուղղվեց՝ ինչո՞ւ հայ իրավաբանական մտքի շատ դեմքեր քննադատում են այս նախագիծը: Պատասխանը՝ կտրուկ էր. «Որքան տարաբաբնական եզրակացություններ եղել են, բոլորն ընդունվել են: Մեզ քննադատելու ամենատարածված մեթոդը բամբասանքն է եւ ժողովրդական լայն զանգվածների անտեղյակությունը»: Դրն Նազարյանը վկայակոչեց Գրիբոյեդովի «Խելքից դատուհասը», որի հերոսը՝ Չացկին հարցնում էր. «Իսկ դատավորներն ովքե՞ր են...»:

Միով բանիվ, մայիսի վերջին դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը եւս կավարտվի, իսկ հուլիսին, համաձայն Սահմանադրության, մենք կբարեփոխենք դատաիրավական համակարգն արմատաբար: Իսկ բուն Սահմանադրության բարեփոխումը դեռ անորոշ է, Արթուր Բաղդասարյանն ասաց. «Հավանաբար կստեղծվի Սահմանադրության փոփոխությունների հանձնաժողովը»: «Հավանաբար» բառը տագնադահարույց է՝ ստեղծել քաղաքացիական բնականոն հարաբերություններ՝ առանց մայր օրենքի դժվար է դատկերացնել:

Ն. Դ.

Երեւանում բացվեց «Արմենիա Մեդիկա» ցուցահանդեսը

ԵՐԵՎԱՆ, 5 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գերմանիայի, Ֆինլանդիայի, Ավստրիայի, Չեխիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Հոլանդիայի, եգիպտոսի եւ այլ երկրների 20 հայտնի ֆիրմաների արտադրանքն է ներկայացված «Արմենիա Մեդիկա» միջազգային ցուցահանդեսում, որը բացվեց մայիսի 5-ին Երեւանում, «Արմէքսդո» կենտրոնում: Այստեղ կարելի է ծանոթանալ ժամանակակից բժշկական տեխնիկայի, դեղերի, ախտահանիչ միջոցների նմուշներին:

Ելույթ ունենալով ցուցահանդեսի բացմանը, ՀՀ առողջապահության նախարարության դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների գործակալության տնօրեն, ակադեմիկոս էմիլ Գաբրիելյանը նշեց իրադարձության կարեւորությունը, որը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ընդլայնել միջազգային կապերը, այլեւ հայ ու արտասահմանցի գործընկերների միջեւ հաստատել համագործակցության նոր ձեւեր:

Ողջունելով հավաքվածներին, Հայաստանում Գերմանիայի դեսպան Կարլա Մյուլլեր-Հոլբեմփերը նշեց, որ ցուցահանդեսին մասնակցում են գերմանական մի քանի ֆիրմաներ:

Ցուցահանդեսի շրջանակներում Երեւանում կանցկացվեն սեմինարներ եւ խորհրդաժողովներ:

Դեղանյութերի վաճառքը դետք է վերահսկվի

Գաղտնիք չէ, որ դեղանյութերի «բիզնեսը» Հայաստանում առեւտրի ամենաձաղկուն տարրերից է: Առավել եւս ակնհայտ է, որ Հայաստանի շրջաններում չգիտեմ ոնց, բայց Երեւանում օրեցօր սնկերի դես բազմանում են դեղերի առեւտրով զբաղվող կետերը, որ դժվար է նույնիսկ դեղատուն անվանել: Այդ կետերն սդաստակող երիտասարդ տղաներն ու աղջիկներն ամենից հաճախ բժշկության հետ առնչություն չունեցող սովորական առեւտրականներ են, որ վերավաճառքի դարգ գործողություն են իրականացնում: Մինչդեռ դեղավաճառը նաեւ խորհրդատուդի լինի այցելուների համար լավատեղյակ այս կամ այն դեղամիջոցի փոխարինիչներին, վաճառվող տեսակների նշանակմանը, օգտագործման եղանակին եւ այլն: Հակառակ դեմքում ոչ միայն չի կարող կողմնորոշել բժշկական գիտելիքներով չփայլող հիվանդին կամ նրա հարազատներին, այլեւ կարող է ուղղակիորեն դադակդմնորոշել, ինչպես իսկ բազդատություն դիմած քաղաքացիներից մեկի դեմքում, որը, շրջելով մի քանի այդդիսի «դեղատուն», դրանցից մեկում «հայտնաբերել էր» դեղավաճառի հավաստմամբ համադատասխան դեղամիջոցը, որն, ինչպես դարզվել է, ամենեւին էլ դահանջվածը չէր: Եվ սա դեղամիջոցների «տիեզերական» գների դայմաններում, երբ 1-2 դեղանյութի համար հարկ է լինում զոհաբերել մի ամբողջ աշխատավարձ:

Առողջապահության նախարարությունը, որ, դատկով նախարարի օրերս տեղի ունեցած մամուլի ասուլիսին վերաբերող հրադարակումներից, առողջապահության դորտը հիվանդին առավել մատչելի դարձնելու ծրագիր է մտադրվում, մտադիր չէ՞, արդյոք, վերահսկողություն սահմանել դեղանյութերի տուկայի նկատմամբ բացառելով դատահակաս անձանց մուտքը անմիջականորեն քաղաքացիների առողջությունը «շոշափող» այդ տիրույթը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հասարակություն

Առողջապահական բարեփոխումների մասին

Առողջապահական համակարգի բարեփոխումների կարեւորությունն ընդգծվում է հաստատես երկու դրսեւորով: Առաջին, առողջապահական ծառայությունների որակը եւ արժեքը ուղղակի առնչվում են ազգաբնակչության սոցիալական դաստիարակության մակարդակի հետ: Երկրորդ, առողջապահությունը պետական բյուջեի ամենախոցելի ծախսային ուղղություններից է: Այսպես, 1998 թ. պետական բյուջեում առողջապահությանը հատկացվել է 17,6 մլրդ դրամ, ինչն ընդհանուր ծախսերի 8,3 տոկոսն է կազմում:

Պետության սոցիալական աջակցության հասցեագրումն առավել անապահովներին եւ կարիքավորներին (համենայն դեպս, այդպիսի ցանկությունների հայտարարումը կառավարության կողմից), զուգորդված (ավելի ճիշտ՝ թելադրված) պետական միջոցների անբավարարության հետ, անխուսափելիորեն պետք է հանգեցնեին վճարովի բժշկության ներմուծմանը: Ավելի ճիշտ՝ դրա օրինականացմանը, քանի որ ինչպես հայտնի է, բուժման համար միշտ էլ վճարվել է, որը վերջին մի քանի տարիներին դարձել էր համաստատած եւ բացահայտ: Դա հետեւանք է նաեւ առողջապահությանը պետական հատկացումների իրական ծավալների շեշտակի նվազման 90-ական թվականների սկզբից, եւ պետական հսկողության թուլացման (եւ բժշկական, եւ ֆինանսական առումով): Բնականաբար, համակարգը ենթարկվեց ինքնակազմավորման մշակելով գանձումների, ազդեցությունների յուրօրինակ բրգաձեւ համակարգ, որտեղ պետական միջոցներին կուտակված եւ շարունակաբար խորացող հիմնախնդիրների լուծումը: Պետական մարմինների վերջին երկու տարիների գործունեությունն առողջապահության բնագավառում իրականում պետության ֆիսկալ գերակայությունների վերանայում է: Փաստորեն խնդիրը հանգեցվում է ֆինանսավորման ծավալներին եւ ձեւերին, որոնցով էլ թելադրված է միջոցառումների մնացյալ մասը, որը չգիտես ինչու «բարեփոխումներ» անունն է ստացել: Առողջապահական հիմնարկներին պետձեռնարկության կարգավիճակի շնորհումը բարձրացրեց դրանց գործունեության ինքնուրույնության իրավունքն ու ֆինանսական հիմքերը: Այն կարող է արմատապես փոխել առողջապահական հիմնարկի եւ պետության փոխհարաբերությունների բնույթը, սակայն բավարար իրավական հիմնավորում այդպես էլ չստացավ: Կառավարության որոշումներն այս առումով սահմանափակվում են պետական բյուջեում նախատեսված գումարների բաշխմամբ ըստ առանձին մարզերի եւ բժշկական օգնության ու սպասարկման տեսակների: Այդ որոշումներն ի վիճակի չեն ապահովելու պետական պատվերի որպես բժշկական ծառայության գնման միջոցով առողջապահության ֆինանսավորման մեխանիզմի կենսունակությունը: Իրականում առողջապահական հիմնարկի ֆինանսավորումը սացել է ոչ թե ծառայության գնման, այլ ձեռնարկության սուբսիդավորման ձեւ: Ընդ որում, կառավարությունն ի վիճակի չէ երաշխավորելու այդ գումարների նպատակային օգտագործումը բժշկական նպատակներով, այսինքն՝ դրանց հասցեագրումն անմիջապես հիվանդին: Այդ պատճառով էլ պետական պատվերով բուժվող հիվանդը շարունակում է վճարել դեղորայքի, բուժանձնակազմի ծառայության, հետազոտման, խորհրդատվության եւ այլնի համար: Ընդ որում, բոլոր այդ վճարները սվերային եւ չհաշվարկվող գումարներ են:

Ամենախոցելին, սակայն, առողջապահությունում ձեւավորված գնային համակարգն է: Եվ պետպատվերային գները, եւ բուժհիմնարկների կողմից սահմանված գները մի շարք դեպքերում մինչեւ 10 անգամ գիջում են «գործող» գներին: Սա հիշեցնում է նրան, երբ երեխի պետական գինը երկու ռուբլի էր, սակայն այդ գնով հասանելի էր էշերին: Պարզ է, որ առողջապահական ծառայությունների համար սահմանելով իրականից ցածր, ոչ շուկայական գներ, պետությունը չի կարող երաշխավորել բժշկական օգնության տրամադրման լիարժեքությունը: Ավելին հավանականությունը, որ պետական հատկացումները հենց իրենք սվերային փողեր կդառնան, եւ ոչ թե կծախսվեն հիվանդի համար, շատ ավելի մեծ է: Ոչինչ չի խանգարում, սակայն, առողջապահական հիմնարկների վճարովի ծառայությունների (պետպատվերի շրջանակներից դուրս) համար սահմանել իրական, շուկայական գներ: Առավել եւս, որ որպես ձեռնարկություն, իրենց բոլոր կարիքները սփոփված հոգում են շուկայական գներով (բացի մարդասիրական որոշ օգնությունից), սկսած էլեկտրաէներգիայից, վերջացրած դեղորայքով: Սակայն դա տեղի չի ունենում, որը մասամբ կարելի է բացատրել ընդհանուր տնտեսական կոնյունկտուրայով: Ի վերջո եկամուտները թաքցնել ձգտում են բոլորը եւ դա արտ է հասարակության մասշտաբով: Սակայն եթե գներն առողջապահությունում չմոտենան իրականությանը, մեր խորին համոզմամբ, բժշկական ապահովագրության մասին խոսք լինել չի կարող: Իսկ դա, ինչպես հայտնի է, առողջապահության ֆինանսավորման ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկն է:

Հազիվ թե կարելի է հուսալ, որ առողջապահությանն ուղղվող վարկային ռեսուրսներն ի վիճակի են թեթեւացնելու ազգաբնակչության կարիքները: Ընտանեկան բժիշկները, որոնց համար ծախսվելու է այդ վարկի հիմնական մասը, որքան մեզ հայտնի է, բարեկեցիկ հասարակության, կամ հասարակության բարեկեցիկ մասին սպասարկող ինստիտուտ են: Հնարավոր է, որ առողջապահության նախարարությունը հաջողեցյակ է այն ընտանիքներից, որոնք այդպիսի սպասարկման անհրաժեշտություն ունեն: Միանգամայն հստակ է, որ դրանով կապահովվեն այն բազմաթիվ խորհրդատվական-դասախոս-մասնագետների ընտանիքները, որոնք կգործուղվեն Հայաստան «փորձի փոխանակման» համար: Հայ ընտանիքների մեծամասնությանը հարկավոր է հիմնվել ընտանեկան բյուջեի եւ ժողովրդական բժշկության այն ունակությունների վրա, որ այս տարիներին էլեկտրիկի մասնագիտության հետ ձեռք բերվեցին: Առողջապահական ազգային գործակալությունը, որի համար էլ ծախսվելու է 3,5 մլն դոլար եւ որը պետք է փոխարինի պետական պատվեր տեղադրող մարմիններին, իր աշխատանքի 100 տոկոսանոց արդյունավետության դեպքում էլ կտեղավորվի այն 10 տոկոսի շրջանակներում, որն էլ հենց առողջապահությունում ֆինանսական շրջանառության երեւացող մասն է:

Իհարկե, կարելի է նաեւ հոետորական հարց բարձրացնել, թե ինչու մինչեւ այժմ հայկական առողջապահությանը չի վիճակվել հայկական արդյունաբերության ճակատագիրը՝ որպես պետական բարեփոխումների արդյունավետության հերթական օրինակ: Սակայն դա բացատրվում է բժշկական գործունեության առանձնահատուկ բնույթով եւ բժշկական կազմի հայտնի ավանդական նվիրվածությամբ սեփական մասնագիտությանը:

Սակայն, այսպես թե այնպես, հազարավոր բժիշկների եւ բուժանձնակազմի այլ անդամների սպառնում է գործազրկության իրական վտանգը, իսկ հաղթահարների բուժաոպահովագրության եւ անհրաժեշտ մակարդակով ու ծավալով բժշկական սպասարկման երաշխավորության հարցերը մնում են բաց:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

Երեւանցիները եւ աղբային համակեցությունը

Երեւի թե չկա մի երեւանցի կամ առհասարակ որեւէ մեկը, որին դուր գա բակերում, հասարակական վայրերում, բնակելի շենքերի աղբատարների շուրջը թափված բազմատեսակ եւ բազմաբնույթ աղբի տեսքը, կամ էլ հաճույք ստանա տեսնելով, թե ինչպես են անտուն ծերերը, անտեր, թափառական շներն ու կատուները քրքրում փողոցային գարշահոտ աղբամանները ծամելու որեւէ բան գտնելու հույսով:

Անկասկած բոլոր երեւանցիներն էլ ուզում են մաքրության եւ կարգուկանոնի մեջ ապրել, բայց ստեղծել ու պահպանել չեն սիրում: Աղբը մեզ ուղեկցում է ամեն տեղ՝ ծառերի տակ, բակերում, մուտքերում, սանդղահարթակներին, վերելակներում, շուկայում, փողոցներում եւ, որ առանձնահատուկ է, աղբամանների շուրջը:

Հեշտոն քաղաքացու մասին կարելի է պատկերացում կազմել՝ դատելով նրա թողած աղբից, որը նա թափում է ամեն քայլափոխին. ծխախոտը վերջացավ՝ ճմռթված տուփը գետնին է, պաղպաղակը կերավ՝ թուղթը ընկնում է հենց տեղում, բանան է գնել՝ կլեղն ընկնում է ուղիղ մայթին՝ սայթաքման եւ անկման վտանգ առաջացնելով: Գուցե աղբամանե՞րն են հիչ: Որոշ տեղերում՝ թերեւս: Բայց գլխավոր պատճառն ուրիշ բնույթ ունի. պարզապես յուրաքանչյուր ոք չի մտածում իր հետեւից եկողի՝ հաջորդի մասին:

Սովետական իշխանության տարիներին հարեւանների ,աղբից՝ կարելի էր իմանալ, թե ինչ են կերել նրանք, ինչպիսի մթերքներ են «ճարել տակից», քանի որ աղբը դուրսլով դնում էին (եւ մինչեւ հիմա էլ դնում են) դռան առաջ, որը լավագույն տարբերակն էր, իսկ ավելի հաճախ պարզապես գիշերը կամ մութ երեկոյան աղբը նետում էին բակ (հիմա էլ սովորական երեւույթ): Դե, որեւէ պատ-ցնյա կամ նրա կինը, առավել եւս երեխաները իրենց թույլ կտայի՞ն աղբը տանել թափելու: Չէ՞ որ դա «մարդակի» հարց էր, իսկ գիշերով ոչ ոք չի տեսնում, նշանակում է թվացյալ քաղաքակիրթ լինելու համբավը կարելի է պահպանել: Էլ չենք խոսում հասարակ մահկանացուների մասին: Այսօր «տակից առնելու» խնդիր չկա, մթերքը շատ է, թեեւ դրանք՝ հիչ, բայց երեւանցին վարչային փոփոխություն չի կրել աղբի հարցում:



Նայելով իրենց արտաքին կոկիկությանը հետեւող եւ բնակարանի մաքրությունը պահպանող հայ կանանց ու աղջիկներին, տղամարդկանց ու երիտասարդներին չես ուզում հոգուդ մեջ անելով որոշել, թե նրանցից որն իր հետեւից աղբ թողեց: Մի կողմից մաքրասեր (սեփական հարկի տակ), մյուս կողմից հասարակական բարեկեցության հանդեպ անտարբեր հայը. այո, աղբային համակեցության ավանդույթներ չունի:

Կարո՞ղ ենք մենք ապրել միեւնույն շենքում: Դրսից շենք մտնողը եթե հատկապես բարձրանում է մինչեւ վերին հարկերը, անպայման կնկատի տարբեր հարկերի մաքրության տարբեր աստիճանները, ես կասեի կեղտոտության աստիճանը: Իսկ եթե ավելի խորանանք՝ նրանք, ովքեր ապրում են ցածրահարկ շենքերում, բոլորովին էլ հաճույքով չեն հյուր գնում ընդհանուր աղբատար խողովակներով օժտված բարձրահարկերը...

Այսօր որոշ մարդիկ հնարավորություն ունեն սեփական վերելակ դնելու ընդհանուր բնակելի շենքում, որից օգտվում է միայն սեփականատերը: Բնականաբար, նրա հյուրերը նույնպես կերթեւեկեն մաքուր եւ անհոտ վերելակով:

Այսօր բացարձակ մաքրություն Երեւանում կարելի է տեսնել միայն շեղ, կոկիկ կառուցած թանկարժեք խանութներում, օֆիսներում, տաղավարներում եւ դրանց շուրջը, որտեղ գեղեցիկ, արտասահմանյան աղբամաններ են դրված, նույնիսկ հատուկ տեսակի ծխախոտի մնացորդների համար (ամենամեծ դժվարությունը հանդիպող աղբը): Նման վայրերում կարելի է տեսնել մաքրող եւ անվերջ մաքրությանը հետեւող աշխատողների: Դարձյա՞լ հանգում ենք այն մտքին, որ հայը միայն սեփականության հանդեպ է հոգատար եւ չունի հասարակական մտածողություն: Թեեւ առաջին հայացքից այդ է ծակում ուրիշի հարստությունը, բայց ըստ երեւույթին առանց խոշոր կապիտալ ներդրումների նույնիսկ տարրական կարգուկանոնի չի կարելի հասնել:

Վերջերս օտերայի հարեւանությամբ, Սայաթ-Նովա փողոցի կողմից մի վճարովի զուգարան է հայտնվել, ավելորդ շեղություն երեւանցու համար: Չէ՞ որ բավարար են շամանտները, շենքերի անկյունները, բակերը, զբոսայգիներն ու վերելակները, առավել եւս հետնաբակերը (բոլորն անխտիր): Ով մասնակցել է վերջին տարիների միտինգներին ու ցույցերին, կարող է վկայել, որ Երեւանի կենտրոնական փողոցներն ու նրանց հարող շամանտները վեր էին ածվել մի հսկայական հասարակական անվճար զուգարանի (մենք, իհարկե, հիշում ենք սովետական հասարակական անվճար զուգարանները, ուր հնարավոր չէր ներթափանցել):

Կապիտալի աշխարհ այցելելիս ինչպե՞ս չհիանաս մաքուր, լվացված փողոցներով, փայլող շամանտներով, աստիճանահարթակների պատուհանների վարագույրներով եւ պատուհանագոգերին ու գեսնին դրված բույսերով, կարծես հենց մուտքից է սկսվում բնակարանը, եւ ինչո՞ւ միայն մուտքից, հենց փողոցից, մայթին դրված աղբամանից, որի շուրջը ոչ միայն ոչինչ չկա թափած, այլեւ մաքուր լվացված է, իսկ աղբը փակ վիճակում դրված: Շատ քիչ երեւանցիներ են իրենց աղբը տնից հանում փակ տոպրակներով:

Այսօր երեւանցիներին անշուշտ չես զարմացնի արտասահմանում կիրառվող աղբահավաքման, աղբատեսակավորման, աղբամշակման մասին տեղեկություններով: Չէ՞ որ աղբը նաեւ հումք է: Աղբամշակման գործարանում ունեցող երկիրը շրջակա միջավայրը մաքուր պահելու հետ մեկտեղ կարող է նաեւ արտադրանք ունենալ, այն էլ մի քանի տեսակի: Արտասահմանում ոչինչ չի կորչում, բացի թափոնը վերամշակելուց որոշ բաներ էլ օգտագործում են մի քանի անգամ, ինչպես, օրինակ, շշերը... Նրանց վրա, ամեն անգամ գործարան մտցնելիս, նշվում է, թե որերորդ անգամն է օգտագործվել: Շշերը տնից դուրս են հանվում հատուկ գույնի մեծ պարկերով, շաբաթը մեկ անգամ: Շաբաթվա մյուս օրերին այդ գույնի պարկեր չես տեսնի փողոցներում: Կենցաղային մնացած աղբը ճշգրիտ տեսակավորվում է հենց տանը, դարձյալ աղբի տեսակին հատկացված որոշակի գույնի տոպրակներում: «Հեռամնաց ասիացիներին» հանգամանորեն բացատրում են, թե որ գույնի տնային աղբամանի մեջ որ աղբը լցնեն: Որպես կանոն, այդ երկրներում խախտումներ են կատարում այլազգիները, որոնց թվում արեւելքից գաղթած հայը զարմանալի օրինաչափությամբ կարգուկանոնին չենթարկվելու իր բնավորությունն է մատնում: Եվ համբերատար ու կիրթ գերմանացին շարունակաբար ծանուցագրեր է ուղարկում ու բացատրում աղբի տեսակավորման կանոնները (նման անեկդոտի այն բժշկին, որն անկիրթ հիվանդից չի նեղանում):

Մենք էլ ենք ուզում կամաց-կամաց մոտենալ Եվրոպային, գոնե որոշ հարցերում. Երեւանում նույնպես պետք է աղբամշակման գործարան աշխատի, որի հումքը կմատակարարվի տնից: Դժվար է ասել՝ երեւանցին այդ ժամանակ տրամադրություն ու համբերություն կունենա՞ ուշադրությամբ տեսակավորելու աղբը, երբ սովոր է պատշգամբից ուղիղ ցած նետել համապատասխան փաթեթը, որը, դեռ վայրէջք չկատարած, օդում բացվում է ու ողջ շեղությամբ ցրիվ գալիս բակի վրա, ուր խաղում են երեխաները...

ՆԱԲԻԼԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Հոգեբան

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԳԵՐՄԱՆԻԱ

Վարդան Օսկանյան. Հարաբերությունների զարգացման մեծ ներուժ ունենք

Գերմանական հեռուստատեսությունն ու մամուլն օրեր առաջ դեռևս ծանուցեցին, թե մայիսի 3-6-ը սպասվում է Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վարդան Օսկանյանի գլխավորած հայկական պատվիրակության այցը Գերմանիայի Դաշնակցային Հանրապետություն: Նույնիսկ հասարակ գերմանացին լուրը բավականաչափ կարևորեց, հանգի տեղեկատվությունը հաղորդում էր երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայից իբրև ավար ծեռք բերված 575 կտոր արժեքի վերադարձի մասին:

- Եռօրյա այցի ծանրաբեռնված աշխատանքային փուլն այդտեղից չսկսվեց իհարկե: Բոնnի բարձունքի վրա գտնվող Փիթերսբերգի կառավարական հյուրատանը, ուր իջևանել է պատվիրակությունը, երկուշաբթի մայիսի 4-ի առավոտյան, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը նախ հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի 1992 թ.-ից դեսպան Ֆրանկ Լամբախին: Շուտով ԵԱՀԿ Մինսկի նախագահության տարածաշրջան այցին կիսեցի պրն Լամբախի այցը: ՀՀ արտգործնախարարության մամլո խոսնակ Արսեն Գասպարյանի ասելով, 55 րոպե տևողությամբ հանդիպման ընթացքում պրն Օսկանյանը պրն Լամբախին ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման շուրջ Հայաստանի տեսակետը: Այն է հակամարտությունը պիտի կարգավորվի փաթեթային եղանակով առանց ճարտարապետների: Նախապայման ասելով պիտի հասկանալ 1996-ին Լիսաբոնում ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ գործող նախագահողի հայտարարության սկզբունքները: ԼՂՀ կարգավիճակի վերաբերյալ բանակցություններում պիտի բացառվեն ինքնակառավարում, ամենալայն հիմունքներով ինքնակառավարում ծեւակերպումները, ինչպես նաեւ ԼՂՀ ենթակայությունն Ադրբեջանին: Պիտի մշակվի այնպիսի կարգավիճակ, որը հնարավորություն կընծեռի հորիզոնական կապեր հաստատելու Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ ուղիղ բանակցությունների միջոցով: Խոսվել է նաեւ, թե Հայաստանը, նրա նորընտիր նախագահը շահագրգռված են հնարավորինս շուտ հասնել խաղաղ կարգավորման: Արտգործնախարարությունը խոսնակի ասելով, պրն Լամբախն ընդունել է Հայաստանի դիրքորոշումը որպես իրատեսական, որը կարող է նպաստել հարցի կարգավորման ռեալ առաջխաղացմանը:

Երկուշաբթի Փիթերսբերգում կայացած հաջորդ կարեւոր հանդիպումը BMW-ի Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի գլխավոր մենեջեր Թիլո ֆոն Հաուլինգի հետ էր: Հայաստանի կողմից արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ զրույցին մասնակցում էր նաեւ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի փոխնախարար Արմեն Պետրոսյանը: Պայմանավորվածություն է ծեռք բերվել, որ BMW այս տարի ներկայացուցչություն կբացի Հայաստանում, որը կգ-բաղվի տեխսպասարկմամբ, իսկ առաջիկայում ընկերության գլխավոր մենեջերը կգա Հայաստան, որից հետո Լադա Արմենիան կկազմակերպի մեքենաների վաճառքը:

Աշխատանքային առաջին օրվա ամենասպասված պահը թերեւս ժամը 12.30-ին նախատեսված Կլաուս Քինկել-Վարդան Օսկանյան հանդիպումն էր, ինչի մասին էր վկայում նաեւ բազմաթիվ լրագրողների ներկայությունը ԳԴՀ արտգործնախարարության շենքում: Հանդիպման սկզբում երկու երկրների արտգործնախարարները համատեղ հայտարարություն եւ համաձայնագիր ստորագրեցին: Առաջինը վերաբերում էր ՀՀ-ի եւ ԳԴՀ-ի հարաբերությունների հիմունքներին, իսկ երկրորդը երկու երկրների օդային հաղորդակցությանը: Ըստ հայտարարության, Հայաստանն ու Գերմանիան իրենց հարաբերությունները կկառուցեն միջազգային իրավունքի եւ ԵԱՀԿ շրջանակներում համաձայնեցված սկզբունքներին ու պարտավորություններին համապատասխան, բոլոր հնարավոր վեճերը կկարգավորեն բացառապես խաղաղ միջոցներով, կնպաստեն իրենց քաղաքացիների, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների միջեւ ազատ շփումների զարգացմանը, առանձնահատուկ նշանակություն կտան տնտեսական փոխշահավետ համագործակցության զարգացմանը, գործող օրենսդրության շրջանակներում ազատ գործունեության հնարավորություն կընծեռեն մյուս կողմի ձեռնարկություններին, տնտեսության բնագավառի մասնագետների պատրաստմանը: Կողմերը համագործակցելու են շրջակա միջավայրի պահպանման, բնական պաշարների էկոլոգիապես անվտանգ օգտագործման բնագավառում, զարգացնելու են համագործակցությունը մշակույթի բոլոր բնագավառներում՝ կնքելով անհրաժեշտ համաձայնագրեր: Սեփական տարածքում գտնվող մյուս կողմի մշակութային արժեքների նկատմամբ հոգատարությունը եւ դրանց պահպանումը երկու երկրների հարաբերությունների նոր որակի բնական արտահայտությունն է, ասվում է հայտարարության տեքստում: Երկուստեք բնագավառի մասնագետների պատրաստմանը: Կողմերը համագործակցելու են շրջակա միջավայրի պահպանման, բնական պաշարների էկոլոգիապես անվտանգ օգտագործման բնագավառում, զարգացնելու են համագործակցությունը մշակույթի բոլոր բնագավառներում՝ կնքելով անհրաժեշտ համաձայնագրեր: Սեփական տարածքում գտնվող մյուս կողմի մշակութային արժեքների նկատմամբ հոգատարությունը եւ դրանց պահպանումը երկու երկրների հարաբերությունների նոր որակի բնական արտահայտությունն է, ասվում է հայտարարության տեքստում: Երկուստեք

ի վրա», ասաց Գերմանիայի արտգործնախարարը շնորհավորելով ՀՀ արտգործնախարարին պատշաճավարման առիթով: Նախարարը տեղեկացրեց, թե իրենք խոսել են ԼՂՀ հարցի կարգավորման մասին: Նախկին նախագահի հրաժարականի եւ նոր նախագահի գալուց հետո ինձ հետաքրքրական էր տեսնել այն նոր կարծիքը, այն կետերը, որոնց վրա է դրվում շեշտը, ասաց պրն Քինկելը: Երկու երկրների արտգործնախարարներն անդրադարձել են նաեւ Հայաստանի Եվրախորհուրդ մտնելու խնդրին, ինչի նախապայմաններից մեկի մահապատժի վերացման մասին արդեն խոսվում է ԱԺ-ում: «Քա-

ՀԱՄԱՌՕՏ

Կիպրոս. Հոլբրուքը մեղադրեց թուրքերին

ՆԻԿՈՍԻԱ, 5 ՄԱՅԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիպրոսի Հանրապետության կառավարությունը հիասթափություն է արտահայտել այն առթիվ, որ թուրքական կողմի անհաշտ դիրքորոշման պատճառով Կիպրոսի երկու համայնքների միջեւ երկխոսությունը վերսկսելու ԱՄՆ-ի ջանքերը ձախողումով ավարտվեցին: Ինչպես հայտարարել է Կիպրոսի կառավարության ներկայացուցիչ Քրիստոս Ստիլիանիդիսը, «երկու համայնքից բաղկացած երկգոտի դաշնություն ստեղծելու նպատակով, ինչպես դա բնորոշված է ՄԱԿ-ի բանաձեւերում, միջհամայնքային բանակցությունները վերսկսելու ԱՄՆ-ի ջանքերը, ցավոք, չնյութականացվեցին»:

Կիպրոսի արտգործնախարար Կասուլիդիսը կոնսուլտացիաների արդյունքների մասին իրազեկ է պահել երկրի քաղաքական կուսակցությունների ղեկավարներին: Առաջիկա ուրբաթ օրը սպասվում է Ազգային խորհրդի նիստ այդ հարցի շուրջ:

Մամլո ասուլիսում ԱՄՆ-ի նախագահի հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Հոլբրուքը թուրքական կողմին մեղադրեց երկխոսության վերսկսման հարցում առաջընթացի բացակայության համար, քանի որ, նրա խոսքերով, կիպրաթուրքերը «փոխեցին իրենց դիրքորոշումը»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նրանց պարագլուխ Ռաուֆ Դենքթաշը պահանջել էր որպես երկխոսություն վերսկսելու պայման այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» ճանաչել որպես պետություն եւ եվրամիության օրակարգից հանել Կիպրոսին այդ կազմակերպության մեջ ընդունելու հարցը: Այդ առնչությամբ Հոլբրուքը նշել է, որ թուրքական կողմի այդ երկու նախնական պայմաններն էլ հենց դժվարություններ ստեղծեցին առաջընթացի հասնելու ճանապարհին:

Հռոմի պապը՝ դարի լեհ

Լեհական «Պոլիտիկա» հանդեսը հրապարակել է «20-րդ դարի ամենանշանավոր 100 լեհերի» ցանկը, որը հիմնված է հանրային հարցումների արդյունքների վրա: Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ն (իսկական անունը՝ Կարոլ Վոյտիլա) գլխավորում է ցանկը: Նրան հաջորդում են աշխարհահռչակ կին ֆիզիկոս Մարի Կյուրին եւ մարզալ ու պետական գործիչ Յոզեֆ Պիլսուդսկին: Լեհաստանի նախկին նախագահ Լեխ Վալենսան ցանկում զբաղեցնում է 6-րդ տեղը:

«ԷՔՍՊՐԵՍ»

Մեծ Բրիտանիա. Զինվորներ են հավաքագրվում նույնիսկ դպրոցներում

Լոնդոնի դպրոցներից մեկում կարելի է տեսնել մի փոքրիկ հրաձգարան, որտեղ երիտասարդ հաճախորդները կարող են ցանկության դեպքում հրաձգության փորձեր կատարել Մեծ Բրիտանիայի թագավորական բանակի զինատեսակներով: Զինվորներ հավաքագրող բանակային սերժանտը հաճախորդներին բացատրում է, որ երկրի բանակում ծառայելու դեպքում կամավորները կրկնակի շատ վարձատրություն կստանան, քան ոստրանի մատուցողները կամ ցրիչները, միաժամանակ ունենալով անվճար կացարան (այսինքն զորանոց) եւ սնունդ: Բրիտանական բանակի հավաքագրողները շրջում են դպրոցներում եւ հանրակացարաններում: Անգլիական բանակում թափուր տեղերը լրացնելու նպատակով նրանք պատրաստ են մոռանալ երբեմնի խստապահանջությունը եւ առաջարկություն անել նույնիսկ նախկին թմրամոլներին: Կինոթատրոնների էկրաններից հանդիսականներին առաջարկվում են դառնալ Բրիտանիայի թագավորական բանակի խիզախ հրեանավորներ, իսկ Լոնդոնի մետրոյի վագոններում փակցված գովազդները բանակում ծառայելու կոչեր են անում ազգային փոքրամասնություններին եւ կանանց: Ի դեպ այս տարվա ապրիլից կանայք կկարողանան զբաղեցնել զինվորական պաշտոնների 70 տոկոսը:

Արեւմտյան Եվրոպայի երկրների մեջ 100 տոկոսանոց արհեստավարժ բանակ ունեն միայն Մեծ Բրիտանիան, Բելգիան եւ Հոլանդիան: Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում եւ Իսպանիայում կամավորական հիմունքներով գործող արհեստավարժ բանակը կազմում է ընդհանուր զինուժի 41-55 տոկոսը: Լիովին արհեստավարժ երեք բանակների մեջ ներկայումս ամենածանր վիճակը տիրում է բրիտանական բանակում: Այնտեղ ամեն տարի կենսաթոշակի են անցնում կամ զինվորական ծառայությունը ինքնակամ թողնում 15 հազար զինվորներ, որ կազմում է ընդհանուր անձնակազմի 14 տոկոսը: «Էքսպրես» հանդեսի տվյալների համաձայն 1996 թ. անգլիական բանակում պակաս է հավաքագրվել 5 հազար նորակոչիկ: Չնայած անցյալ տարվա ամռանը գործադրված ջանքերին, 1997 թ. նորակոչիկների թափուր տեղերը նվազել են աննշան չափով, իջնելով 4800-ի:

Անգլիական բանակի մայոր Դեյլինն ասում է. «Մարդիկ կարծում են, թե մենք շարունակում ենք կրճատել բանակի անձնակազմը, մինչդեռ իրողությունն այլ է»: Նորակոչիկների պակասը նա բացատրում է այն բանով, որ Մեծ Բրիտանիայի թագավորական բանակում տարբեր կարգի ճնշումներ են գործադրվում ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Պաշտոնական զեկուցագրերից մեկի համաձայն անգլիական բանակում սեւամորքներին եւ ասիացիներին մշտապես վիրավորանքների ու ծաղրուծանակի են ենթարկում: Մասնավորապես ներկայումս հետաքննություն է վարվում մի սեւամորթ զինվորի գործով, որին իր գնդի ծառայողները խոզանակով «մաքրել էին»՝ նրան «սպիտակեցնելու» նպատակով: Մեկ ուրիշ զինվոր դատական գործ է բացել, պնդելով, թե ինքը խաչելության նմանակման մի գործողության զոհ է դարձել: Զանազան արյունալի կռվանքների ենթարկված 70 զինվորներ որոշել են դատի տալ Մեծ Բրիտանիայի կառավարությանը: Պատահական չէ, որ բրիտանական բանակի վարկի վերականգնման նպատակով այժմ հավաքագրող սերժանտներ են գործուղվում Լոնդոնի դպրոցներ

Դ. Ռ.

Լրագրողների համաժողով Բրազիլիայում

ԲՐԱԶԻԼԻԱ, 5 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 112 երկրների զանգվածային լրատվության միջոցների 300-ից ավելի ներկայացուցիչներ են մասնակցում լրագրողների 23-րդ աշխարհաժողովին: Այդ համաժողովը կիրակի օրը բացվեց Բրազիլիայի Ռեսիֆի քաղաքում: Պեռնամբուկուի նահանգի վարչական կենտրոնում: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, նրա ընթացքում խոսք է լինելու մամլո ազատության, սոցիալական արդարության եւ մասաղ սերնդի իրավունքների համար մղվող պայքարում լրագրողների ունեցած դերի մասին:

Լիագումար նիստերից բացի, կկայանան աշխատանքային երեք խմբի նիստեր, որոնցում կքննարկվեն հատուկ հարցեր լրագրողների իրավունքներն ու բարոյականությունը, կապի արդիական համակարգերի եւ տեխնիկական մյուս նվաճումների օգտագործումը 21-րդ դար միտված ժուռնալիստիկայի ասպարեզում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Կոմիտասը եւ Մակար Եկմալյանը տարաշայնության ու ներդաշնակության տարերքում

Կոմիտասը հայ երաժիշտներից անմիջականորեն դաս է առել միայն երկուսից՝ Քրիստափոր Կարա-Մուրզայից՝ իր ծեմարանական ուսուցման տարիներին եւ Մակար Եկմալյանից՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում մի կարճ ժամանակով ուսանելիս: Մակար Եկմալյանի ուսուցչությամբ նա ծանոթացել է եվրոպական երաժշտությանը եւ ձեռք բերել տեսական բավականին խորը գիտելիքներ:

Եկմալյան-Կոմիտաս հանդիպումը օգտակար է լինում նաեւ Եկմալյանի համար: Կոմիտասը իր ուսուցչին հանձնում է իր ծանոթացած հայ ժողովրդական-գեղջկական երգերի մի փունջ՝ քվով 23 հատ, որոնց օգնությամբ Եկմալյանը նախ ծանոթանում է բուն գեղջկական երգերին եւ այնուհետեւ ինքն է հավաքում եւ մշակում գեղջկական մի շարք երգեր, մի գործ, որը Եկմալյանը չէր արել մինչ Կոմիտասին հանդիպելը: Այսպիսով 1895 թվականի Եկմալյան-Կոմիտաս հանդիպումը երկուսին էլ օգտակար է լինում: Սակայն նրանց լավ հարաբերությունները երեք տարի հետո վատանում են, երբ Կոմիտասը գրախոսականով հանդես է գալիս Եկմալյանի նշանավոր «Պատարագի» մասին: Կոմիտասը հոդված է տպագրում էջմիածնի «Արարատում» «Երգեցողությունք սրբո Պատարագի... ներդաշնակյալ ի ձեռն Մ. Եկմալյանի» վերնագրով, ուր արդեն Բեռլինի մասնավոր կոնսերվատորիայի ուսանող Կոմիտասը հակիրճ շարադրում է հայ երաժշտության մասին իր կարեւորագույն դիտարկումները ու եզրահանգումները եւ նույնիսկ հայ հոգեւոր երաժշտության ծրագրային-թեզեր է զարգացնում՝ խիստ ինքնատության ենթարկելով Եկմալյանի սկզբունքային մոտեցումները, որոնցով հայ երաժշտության կերտին ու ոգուն անհարիր ընկալումներ: Եկմալյանը նույն «Արարատում» հրապարակում է Կոմիտասին արհամարհող, ոչնչացնող մի պատասխան, որն ըստ էության չէր պատասխանում Կոմիտասի ինքնատեսական դիտողություններից եւ ոչ մեկին, այն ավելի շուտ վիրավորված ինքնասիրությունից բխող զայրալից խոսք էր: Եկմալյանին հավասարակշռությունից հանել էր մի ժամանակվա սանի ուսուցողական տոնը: Մակար Եկմալյանի եւ Կոմիտասի միջեւ տարաձայնությունը ըստ էության «Պատարագի» շուրջը չէր: «Պատարագի» լույս աշխարհ գալը պարզապես այն հարմար պահն էր, որ երիտասարդ Կոմիտասը բանալիներ իր ասվագ ու փորձառու, տեսական լուրջ գիտելիքներով օժտված, Պետերբուրգի կոնսերվատորիան փայլուն ավարտած, ուս մեծ երաժիշտներ Ռուբենշտեյին, Ռիմսկի-Կորսակովին, Սոլովյովին ու Լյադովին աշակերտած իր ուսուցչի հետ հայկական երաժշտության շատ ավելի կարեւոր խնդիրների, եկմալյանական ընթռնումների շուրջ: Ընթռնալով «Պատարագի» առաջաբանում Եկմալյանի արտահայտած՝ հայ երաժշտությունը պարսկա-արաբական լինելու թեզի դեմ, Կոմիտասը եռանդուն կերպով հերքում էր այն եւ նշում, որ հայ երաժշտությունն իր ուրույն լադակազմությամբ ու կառուցվածքով էականորեն տարբեր է թե եվրոպականից եւ թե պարսկա-արաբականից: Եկմալյանը հայկական երաժշտության ինքնուրույնությունը չէր ընդունում եւ այն համարում էր պարսկա-արաբական երաժշտության մի ճյուղը, մասը, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ եվրոպացի հայագետներից ոմանք մեր լեզուն հայերենը, համարում էին հնդեվրոպական լեզվաընտանիքի պարսկական ճյուղի լեզու: Բնական է, որ Կոմիտասը չէր կարող համաձայնել Եկմալյանի հետ եւ նրա «Պատարագին» նվիրված իր գրախոսականում Եկմալյանի այդ տեսակետը ժխտում էր: Բացի այդ Կոմիտասը բացահայտում էր, որ Եկմալյանը պատարագի երաժշտությունը ձեւել է եվրոպական մկրատով եւ կարել ոչ հայկական երաժշտության կառուցվածքային առանձնահատկություններին համապատասխան: Կոմիտասը իր գրախոսականում ապացուցում էր եւ զարգացնում միանգամայն նոր, հայ երաժշտության էությունից բխող դրույթներ որոնք հետագայում իրականացրեց իր «Պատարագը» ստեղծելիս:

Երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանը Եկմալյանի «Պատարագի» առթիվ գրել է. «Կաղկանդված հարմոնիայի «կանոնների» կեղծ հասկացությամբ ու նախապաշարմունքով, Եկմալյանը որեւ անգոր է գտնվել բացահայտելու ազգային մելոդիաների իսկական արտահայտչական պոտենցիալները ու ներքին դինամիկան: Այստեղ էլ նշենք նրա զարմանալի անտարբերությունը իր մշակած եղանակների պոլիֆոնիկ զարգացման հնարավորությունների նկատմամբ: Հոկայական ստեղծագործության ամբողջ ընթացքում նա չի օգտագործել պոլիֆոնիկ բազմաձայնության ձեւերը, իսկ հենց սրանք կարող էին Եկմալյանի դրած խնդրի իսկական ստեղծագործական լուծման գործում վճռական դեր խաղալ»: Եվ այնուհետեւ ավելացնում է. «Կոմիտասի ինքնատությունը չափազանց ճշմարիտ կերպով որոշում է Եկմալյանի այդ խոշորագույն աշխատության պատմական սահմանափակությունը, հակասականությունը եւ պահպանողականությունը»: Ինչ մնում է Եկմալյանի պատասխանին, ապա Շահվերդյանը այն համարում է «զայրալից, բայց անօգնական հերքում», որը Եկմալյանը ավարտում է Կոմիտասին թերուս համարող հետեւյալ դիտողությամբ. «Եթե արժանապատիվ հայը յուր երաժշտական ուսումն ավարտած լիներ, չէր գրի շատն այն բաներից, որ գրել է իր հոդվածում»:

Անշուշտ, Կոմիտասի հոդվածը զերծ չէր թերություններից, ոմանք հախուռն էր, կային նաեւ վրիպակներ, սակայն հայկական երաժշտության խորը իմացությամբ, Եկմալյանի մեծ ու փոքր սխալները բացահայտելով, Կոմիտասի հոդվածը լուրջ ներդրում էր հայ երաժշտության ապագայում:

Ի պատիվ իրեն Կոմիտասը անկողմնակալորեն չէր ուրանում նաեւ իր երբեմնի ուսուցչի գլուխգործոցի արժանիքները: Կոմիտասագետ Ռոբերտ Աթայանը գրում է. «Ինչ վերաբերում է Եկմալյանի «Պատարագի» նկատմամբ Կոմիտասի ինքնատական վերաբերմունքի հարցին, ապա չնայած բազմակողմանի դիտողություններին, Կոմիտասի ինքնատության գլխավոր առարկան ոչ թե Եկմալյանի երկն է ամբողջապես, որին նա բարձր գնահատական է տվել, այլ պատարագում օգտագործված եղանակներն են, որոնց մեղեդիական ոճի դեմ առարկում է Կոմիտասը»:

Աթայանը համեմատելով հայ ժողովրդական երգերի մշակման եկմալյանական եւ կոմիտասյան մոտեցումները, բացահայտում է այս բնագավառում էլ նրանց ընթռնումների էական տարբերությունը ի օգուտ Կոմիտասի, չուրանալով, սակայն ոչ մեկի եւ ոչ էլ մյուսի վաստակը հայ երաժշտության զարգացման գործում:

Համարձակ կարելի է ասել, որ Մակար Եկմալյանը Կարա-Մուրզայի եւ մյուս նախորդների հետ ներկայացնում են հայ երաժշտության զարգացման այն կարեւոր փուլը, այն պատվանդանը, որին հենված Կոմիտասը բարձրացավ հայ երաժշտության Արարատը:

Հարց է ծագում, հաշտվեցի՞ն արդյոք հետագայում հայ երաժշտական մշակույթի այդ երկու խոշորագույն գործիչները: Դժբախտաբար, ոչ: 1899 թվականին Ս. Բժշկյանի դասագրքի առթիվ եպիսկոպոս Մանկունուն գրած նամակում Եկմալյանը կրկին անդրադառնում է Կոմիտասի հոդվածում շոշափված հարցերին եւ դարձյալ մնում է իր «պարսկա-արաբական» սկզբունքին կառչած, միայն թե, հավանաբար ոչ առանց Կոմիտասի ինքնատության ազդեցության, այստեղ նա մի դրական քայլ է անում՝ այս անգամ հայկական երաժշտությունը համարելով ոչ թե պարսկա-արաբականի մասը, այլ ընդամենը ազդեցություններ կրած:

Երբ Կոմիտասը ոչ միայն հայոց միջավայրում, այլ ողջ երաժշտական աշխարհին անվիճելիորեն ապացուցել էր հայ երաժշտության բացառիկ ինքնուրույնությունը, ճշտել նրա էությունը բնորոշող առանձնահատկությունները իր գիտական աշխատություններում եւ դասախոսություններով, Եկմալյանը արդեն կնքել էր իր մահկանացուն, եւ մենք չենք կարող ասել, թե այդ ժամանակ նա ինչպես կվերաբերվեր Կոմիտասի գործունեությանը, եթե կենդանի լիներ:





ԽԱՉԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

ԲԵՄ

«Փոքրիկ վիրտուոզներ»-ի ելույթը

Հայֆիլհարմոնիայի փոքր համերգասրահում տեղի ունեցավ Հայ ավետարանչական ընկերակցության «Փոքրիկ վիրտուոզներ» անսամբլի համերգը՝ նվիրված այդ կազմակերպության 80-ամյակին: ՀԱԸ Հայաստանի ներկայացուցիչ վերապատվելի Ռընե Լեւոնյանի եւ երաժիշտ Սամվել Ավանեսյանի նախաձեռնությամբ ստեղծված խումբը մեկ տարեկան է, որի անդամները հանրապետական մրցույթների դափնեկիրներ են, բացառությամբ ինքնամյա Սեւակի, որն ասաց, թե դեռ չի հասցրել դափնեկիր դառնալ: Բացի Լուսինե Աբաջյանից, որը սովորում է Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում, խմբի մյուս անդամները Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի սաներ են:

Վիրտուոզ ասելով տարիքով մեծ ենք հասկանում, սակայն բեմ բարձրացած երեխաները (ամենամեծը՝ Մամերգին հրավիրված հյուրերին ապացուցելով, որ «կարող են նվագել այնպիսի ստեղծագործություններ, որոնք մեծերը չեն կարողանում նվագել»: Սակայն երեխաները որքան էլ վարպետորեն նվագեն, երեխաներ են եւ մանկական չարաճճիությունները նրանց առանձնահատկությունն է, որով եւ հաճելիորեն համեմված էր նրանց համերգը: Հաջողություններ մաղթենք փոքրիկ վիրտուոզներին, հուսալով, որ տարիների ընթացքում նրանք ավելի կվարպետանան իրենց արվեստում:

Ա. Ա.

ՖՐԱՆՍԻԱ

Կաննի փառատոնի բացումը՝ մայիսի 13-ին

Կաննի 51-րդ կինոփառատոնը կսկսվի չորեքշաբթի՝ մայիսի 13-ին: Մայլ Նիկոլսի «Նախընտրական ծաղիկներ» ֆիլմով: Փառատոնային ցուցադրումը [illegible] ֆիլմի արտասահմանյան վարձույթի տարբերակով, որը ինքնադատների բարձր գնահատականին է արժանացել, սակայն հասարակության կողմից ջերմ չի ընդունվել: Բացման հանդիսավոր արարողությանը ծրագրված է Ջոն Տրավոլտայի եւ Էմմա Թոմփսոնի ներկայությունը: Դերասաններն այդ ֆիլմում խաղացել են ԱՄՆ-ի նախագահի թեկնածուի եւ նրա տիկնոջ դերերը, եւ ֆիլմը դիտողները միաձայն նշում են նրանց եւ Բիլ ու Հիլարի Քլինթոնների նմանությունը: Փառատոնի վերջին օրը՝ մայիսի 24-ը կնշանավորվի «Անկախության օր» եւ «Գոծիլա» ֆիլմերի պրոդյուսերներ Դին Դեւլինի եւ Ռոլանդ Էմմերիխի blockbuster-ի եվրոպական պրեմիերայով, որի ամերիկյան մեկնարկը կայվի չորս օր շուտ: Առաջիկա ամռան հավանական սուպերհիթի ընտրությունը փակման արարողությանը, ըստ Variety-ի, պատահական չէ, կազմկոմիտեն որոշեց, որ հենց այս ֆիլմը կգրավի հասարակությանը:

Փառատոնի մրցութային ծրագրին կմասնակցեն Ֆրանսիան, Դանիան, Հունաստանը, Ռուսաստանը, Իտալիան, Թայվանը, Ավստրալիան, Կոլումբիան, Սրբենիան, [illegible] եւ ԱՄՆ-ը ներկայացնող 22 ֆիլմեր: Մրցութային ֆիլմերը կգնահատի Մարտին Սկորսեզի գլխավորությամբ հանձնաժողովը: Բացի նրանից, հանձնաժողովի կազմում են կուբացի գրող Զո Վալդեսը, ռեժիսորներ Չեն Քեյջը, Ալեն Կոռնոն, Մայլ Ուինթերբոթթոմը եւ այլն: «Երբ ամերիկյան ֆիլմերը հիշ են, մարդիկ ասում են, թե մեծ ստուդիաները բոյկոտում են Կաննը, ասում է փառատոնի հանձնաժողովի նախագահ Ժիլ Ժակոբը: Երբ դրանք շատ են, սկսում են պախարակել «ամերիկյան իմպերիալիզմը»: Սակայն այս տարի մեզ հաջողվեց «ոսկե միջինը» գտնել»: Փառատոնի ծրագրում նախատեսված է արտամրցութային բազմաթիվ ֆիլմերի ցուցադրում: Հնարավորություն կլինի դիտելու Ռոջեր Կորմանի եւ Մայլ Միդավոյի (ԱՄՆ), Մորիս Բեռնարի եւ Կլոդ Բերրիի (Ֆրանսիա), Ադրիանո դե Միչելի եւ Պիո Անջելեսիի (Իտալիա) եւ այլ ռեժիսորների մոտ երեսուն ֆիլմ:

ԱԲ. Մ.

«Կերքամ երկիրս փնտրելու»

Սփյուռքահայ թատերագիր եւ հասարակական գործիչ Հրանտ Մարգարյանի ուխտագնացությունը դեպի Արեւմտյան Հայաստան

Մեր արքմնի երազներում այսօր էլ դեռ մենք պատարագում ենք Աղթամար վանքում եւ ավանդում սերունդներին՝ ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա, կամքի երազ եւ երազի կամք:

– Ցավակներիս անունն է Կամք եւ երազ, քանզի այս պահին պատմություն ունենք կիսված, հող ունենք կիսված, եկեղեցի ունենք կիսված...

Սփյուռքահայ թատերագիր եւ հասարակական գործիչ Հրանտ Մարգարյանն «Ուխտագնացություն դեպի Արեւմտյան Հայաստան» իր նկարահանած պատկերներով Կիլիկիայից քայլ առ քայլ մեզ առաջնորդեց մինչեւ Բագրատունյաց թագավորության քաղաքամայր Անի՝ որպես յուրաքանչյուրիս խոստովանանք՝ «Կերքամ ես ինձ գտնելու»:

Բանախոսությունն ինչպես քառաձայն պատարագ հնչեց Հայաստանի գրողների միությունում, Հայաստանի ամերիկյան համալսարանում, արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի կոմիտեում եւ Երեւանի պետական համալսարանում:

– Հայության հալածված ոգին վերկհառնի հայրենիքում, ուսանողության անունից հաստատեց ժուռնալիստիկայի բաժնի դեկան, գրականագետ Գառնիկ Անանյանը:

Նյույորքցի մեր հայրենակիցը ուխտագնացությունից հետո առավել չափով երեւանի պետական համալսարանից էր տպավորված:

– Այսքան հայ ուսանող մեկտեղված երբեք չեմ տեսած: Հպարտության եւ ուժի աղբյուրը կա Հայաստանում:

Ինքնության խոսքերի հավաստումն էր արցախյան հերոսամարտի ճամփաներով նոր ուխտագնացությունը, որ տարել, հասցրել էր իրեն բարձրանիստ Շուշի:

...Եվ շարունակվում է Հրանտ Մարգարյան ուխտավորի ճանապարհը դեպի սփյուռք՝ Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա... զորացնելու ոգին եւ ամբողջացնելու գաղափարը, երկիրը մեր Հայաստանն է, թեեւ այսօր դեռեւս նրա սահմաններից դուրս է մեր ժողովրդի սփյուռք հասածի ծննդավայրը:

ՄԱՆԱՆ ԱՇՈՒՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՆԵՏԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Ավանդույթները վերականգնելու ցանկությամբ

Վարդան Ասատրյանի հուշամրցաշարը

Նետաձգությունը Հայաստանում լավ ավանդույթներ ունի: Տարիներ առաջ անցկացվում էին համամիութենական մրցումներ «Հայկի նետ», «Գարնանային նետեր»: Ցանկությունն կա վերականգնել բարի ավանդույթները:

Երեւանի քաղաքապետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի բաժինը հանդես եկավ գովելի նախաձեռնությամբ ֆուտբոլի, նետաձգության եւ մականախաղի մարզադպրոցում անցկացնելով նետաձգության երախտավոր Վարդան Ասատրյանի երկրորդ հուշամրցաշարը, որը նաեւ մայրաքաղաքի առաջնությունն էր: Մրցումներին մասնակցեցին 20 տղամարդ եւ 15 կին նետաձիգներ:

Ասատրյանը այս մարզաձեւի Հայաստանի առաջին չեմպիոնն էր, առաջին միջազգային մրցավարը: Նա մի քանի տարի մարզել է ՀՀ հավաքականը, որն այդ ընթացքում զգալի հաջողություններ է հասել միութենական ամենատարբեր առաջնություններում, մրցաշարերում: Վարդան Ասատրյանը դաստիարակել է մեծ թվով առաջնակարգ մարզիկներ, որոնցից ավելի քան մեկուկես տասնյակը սպորտի վարպետներ են:

Այս հուշամրցաշարում, մեր ուժեղագույն նետաձիգներից բացի, հանդես եկան նաեւ Վրաստանի Բաթում քաղաքի 6 ներկայացուցիչներ:

Կանանց մրցումներում տոն տվողները Աջարիայի մարզուհիներն էին: Ս-1 վարժությունում խաթունա Փութկարաձեն գրավեց առաջին տեղը 1272 միավոր: Երկրորդ տեղում է նրա թիմակից Գալինա Տոցկայան 1195, երրորդում երեւանցի Սուսաննա Մարգարյանը 1093 միավոր: Վերջինս մրցաստարեզ է վերադարձել շուրջ 10 տարվա ընդմիջումից հետո: Նա սպորտի վարպետ է, Հայաստանի նախկին չեմպիոնուհի եւ, իհարկե, կուժեղացնի հանրապետության հավաքականը:

Երեքօրյա դպրարի արդյունքում մրցումների հաղթող դարձավ Խաթունա Փութկարաձեն: Երկրորդ եւ երրորդ տեղերը եւս գրավեցին բաթումցի մարզուհիները Գալինա Տոցկայան եւ Ասմաս Դիասալիձեն:

Տղամարդկանց մրցումներում Բաթումի երեք ներկայացուցիչները չկարողացան տեղ գրավել մրցանակակիրների թվում: Ս-1 վարժությունում առաջին երեք տեղերում են Անդրանիկ Շահնազարյանը (1268 միավոր), Արթուր Բաշիկյանը (1243) եւ Արտակ Ներսիսյանը (1203): Ընդհանուր հաշվարկում հաղթեց Արտակ Ներսիսյանը, որը կարողացավ առաջ անցնել Շահնազարյանից եւ Բաշիկյանից:

Այժմ մեր հանրապետության ուժեղագույն նետաձիգները պատրաստվում են մասնակցելու Թուրքիայի Անթալիա քաղաքում մայիսի 24-27-ը անցկացվելիք «Գրան պրի» շարքի միջազգային մրցաշարին:

ԹԵՆԻՍ

Այս աշխարհի ուժեղները

Հրապարակվել է աշխարհի թենիսիստների դասակարգման հերթական ցուցակը:

Տղամարդկանց ռեյտինգ-ցուցակը կրկին գլխավորում է Փիթ Սամփրասը: Նա համարյա 300 միավորով առաջ է Պետր Կորդայից: Երրորդ տեղում է կարճ ժամանակով աշխարհի առաջին թենիսիստ դարձած Մարսելո Ռիոսը:

Կանանց առաջատար Մարտինա Հինգիսի առավելությունը մյուսների նկատմամբ առավել քան համոզիչ է: Իսկ նրա կայուն բարձր արդյունքները խոսում են այն մասին, որ երիտասարդ ավելցյարուհին դեռ շատ երկար կտիրի «թենիսի թագուհու» գահին:

Տղամարդիկ

1. Փիթ Սամփրաս (ԱՄՆ)՝ 3775 միավոր, 2. Պետր Կորդա (Չեխիա)՝ 3499, 3. Մարսելո Ռիոս (Չիլի)՝ 3200, 4. Պատրիկ Ռաֆթեր (Ավստրալիա)՝ 3190, 5. Գրեգ Ռուսեդսկի (Մեծ Բրիտանիա)՝ 3094, 6. Եվգենի Կաֆելնիկով (Ռուսաստան)՝ 3027, 7. Յոնաս Բյորկման (Շվեդիա)՝ 2683, 8. Գուստավո Կուերտեն (Բրազիլիա)՝ 2291, 9. Ալեխս Կորետյա (Իսպանիա)՝ 2202, 10. Կարել Կուչերա (Սլովակիա)՝ 2141 միավոր:

Կանայք

1. Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)՝ 5805 մ միավոր, 2. Լինդսեյ Դեյվենպորտ (ԱՄՆ)՝ 3963, 3 Յանա Նովոտնա (Չեխիա)՝ 3939, 4. Ամանդա Կոթզեր (ՀԱՀ)՝ 2944, 5. Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)՝ 2711 միավոր:

ՀՈԿԵՅ

Ֆրանսիացիների անակնկալը

Աշխարհի առաջնությունում

Շվեյցարիայի Բազել եւ Ցյուրիխ քաղաքներում ընթանում է հոկեյի աշխարհի 62-րդ առաջնությունը: Մասնակից 16 թիմերն առայժմ 4 խմբերում մրցում են հաջորդ փուլ դուրս գալու եւ մեդալների համար պայքարը շարունակելու համար:

Մի պահ Չեխիա-Բելառուս խաղից, որն ավարտվեց չեխերի հաղթանակով 4-2 հաշվով:

Այդ իրավունքն արդեն նվաճել են օլիմպիական չեմպիոնները՝ Չեխիայի հավաքականի հոկեյիստները: Նրանք 8-2 հաշվով հաղթեր են Ճապոնիայի, 4-2 հաշվով Բելառուսի թիմերին եւ 4 միավորով գլխավորում են «A» խմբի մրցաշարը: Այստեղ 2-ական միավոր ունեն Գերմանիայի եւ Բելառուսի հավաքականները: Պայքարը շարունակելու ավելի մեծ հնարավորություններ ունեն Բելառուսի մարզիկները, որոնք հանդիպելու են ճապոնացիների հետ:

«B» խմբում 3-ական միավոր են վաստակել Կանադայի եւ Սլովակիայի թիմերը: Ամենայն հավանությամբ, հենց նրանք էլ հաջորդ փուլ դուրս կգան: Ի դեպ, 2-րդ տուրում նրանց հանդիպումը ոչ-ոքի 2-2 ավարտվեց: Սա շատերը անակնկալ համարեցին:

Իսկ ինչպե՞ս անվանել «C» խմբի ԱՄՆ-Ֆրանսիա հանդիպման արդյունքը: Ֆրանսիացիները 3-1 հաշվով կարողացան պարտության մատնել ուժեղ մրցակիցներին, ինչը իրոք անակնկալ էր: Այս խմբում առաջատար է ընթանում Շվեդիայի հավաքականը, որն ունի 4 միավոր: Երկրորդ ուղեգիրը բաժին կհասնի ԱՄՆ-ի կամ Ֆրանսիայի հավաքականին, որոնք ունեն 2-ական միավոր:

«D» խմբում առաջին-երկրորդ տեղերն արդեն արտահայտվել են Ֆինլանդիայի եւ Ռուսաստանի հավաքականները, որոնք պարտության են մատնել Լատվիայի եւ Ղազախստանի թիմերին: Իսկ խմբի հաղթողի հարցը կորոշվի նրանց միջեւ այսօր կայանալիք խաղի ժամանակ:

ԼՈՒՐԵՐ

Ընտրվեց ֆեդերացիայի նոր նախագահ

Տեղի ունեցավ հունահռոմեական ոճի ըմբշամարտի հանրապետական ֆեդերացիայի հաշվետու-ընտրական կոնֆերանսը: Վերջին շրջանի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ ֆեդերացիայի նախագահ Հայրապետ Հայրապետյանը: Կայացած ընտրություններում մարզաձեւի հանրապետական ֆեդերացիայի նոր նախագահ ընտրվեց աշխարհի եռակի չեմպիոն Բենուր Փաշայանը:

Առաջին շրջանի խաղերից հետո

Մայրաքաղաքի «Վան» մարզակոմբի դահլիճում անցկացվեցին վոլեյբոլի Հայաստանի տղամարդկանց առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի առաջին շրջանի խաղերը: Հաղթող դարձավ «Հայկ» ակումբի թիմը, որը շահեց իր բոլոր 3 հանդիպումները: Մեկական հաղթանակ ունեցան ՆԳ եւ ԱԱ նախարարության, ՖԻՄԱ-1, «Նաիրիս» թիմերը: Ըստ խաղափուլերի արդյունքների, նրանք հենց այս հերթականությամբ էլ տեղեր գրավեցին մրցաշարային աղյուսակում: Հանրապետական առաջնության երկրորդ շրջանի խաղերը տեղի կունենան Երեւանում, մայիսի 28-31-ը:

Կմասնակցեն Թավրիզի միջազգայինին

Հայաստանի հավաքականը կմասնակցի մայիսի 11-22-ը կայանալիք Թավրիզի բազմօրյա խծուղային հեծանվավազքի միջազգային մրցումներին: Ավանդաբար անցկացվող հեծանավավազքն այս անգամ բաղկացած կլինի 12 փուլերից, որոնց ընդհանուր երկարությունը 1600 կմ է: Մեր հավաքականը մրցումներին կմեկնի հետեւյալ կազմով՝ Արսեն Ղազարյան, Արմեն Գյոգալյան, Դմիտրի Դյակով, Արյոմ Գալստյան, Վազգեն Դուլիջանյան եւ Գեղամ Նաջարյան: Թիմի գլխավոր մարզիչն է Ալբերտ Սոլոյանը:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Խորկինայի հաջողությունը

Սանկտ Պետերբուրգում ավարտվեց սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնությունը: Տղամարդկանց մրցումների մասին արդեն հայտնել ենք:

Կանանց մրցաոլորտի առաջին օրը խոշոր անակնկալ գրանցվեց: Երիտասարդական թիմային մրցումներում նախորդ առաջնության հաղթողները Ռուսաստանի մարմնամարզուհիները միայն չորրորդ տեղը գրավեցին: Չեմպիոնուհիներ դարձան Ուկրաինայի մարզուհիները, իսկ մրցանակային երկրորդ եւ երրորդ տեղերում են համապատասխանաբար Ռումինիայի եւ Իտալիայի ներկայացուցիչները:

Կանանց առաջնությունում հաղթեց Ռումինիայի հավաքականը, որն իրենից հետ թողեց Ռուսաստանի եւ Ուկրաինայի մարմնամարզուհիներին: Սակայն Ռուսաստանի մարզուհիները հիանալի հանդես եկան անհատական մրցումներում: Բազմամարտի չեմպիոնուհու մեծ ոսկե մեդալը նվաճեց Աստլանտիայի օլիմպիադայի հերոսուհի Սվետլանա Խորկինան: Երկրորդ եւ երրորդ տեղերը գրավեցին ռումինուհիներ Կորինա Ունգուրյանուն եւ Սիմոնա Ամանարը: Խորկինան եւս երկու ոսկե մեդալ շահեց առանձին գործիքների վրա կատարած վարժություններ համար: 19-ամյա մարզուհին հաղթեց զուգափայտերի եւ ազատ վարժությունների մրցումներում: Վերջին մրցաձեւում Խորկինայի հետ հաղթանակը կիսեց ռումինուհի Կորինա Ունգուրյանուն: Ռուսաստանի հավաքականը եւս մեկ ոսկե մեդալ նվաճեց հավասարակշռության գերանի մրցումներում: Հուրախություն տեղի մարզասերների, չեմպիոնուհի դարձավ պետերբուրգցի Եվգենիա Կուզնեցովան: Վերջին՝ 4-րդ ոսկին բաժին հասավ հենացատկերում աշխի ընկած Ադրիանա Վարգային (Հունգարիա):

ՅԻՍԱՊՈՐՏ

Ավանդական մրցարավը

ԱՄՆ-ի Քենթուկի նահանգի Լուիսվիլ քաղաքում անցկացվեց ավանդական նշանավոր ձիարավը: Արդեն 124-րդ անգամ անցկացվող մրցումները, ինչպես միշտ, այս անգամ եւս մեծ հետաքրքրություն էին առաջացրել: 120 հազար հանդիսականների թվում էին բարձրաշխարհիկ շատ անձինք: Մրցարավին հետեւելու էին եկել նաեւ հանրահայտ Ջեկ Նիքլսոնը, Սիլվեստր Սթալլոնեն: Նշանավոր մարդկանցից ոմանց ձիերը մասնակցում են այս հայտնի մրցումներին: Օրինակ, այդ մարդկանցից մեկը Ռիկ Պետինոն է՝ «Բոսթոն Սելթիկս» բասկետբոլային պրոֆեսիոնալ թիմի մարզիչը: Ընդամենը 2 րոպես տեւող վազքին մարդիկ հետեւում են շունչը պահած՝ ցավելով «իրենց» ձիերի համար:

Իսկ ձիերի իսկական տերերից մեկը Բոբ Բաֆերսն էր, որի Սիլվեր Չառլի անունով ձին անցած տարի անսպասելիորեն չեմպիոն էր դարձել: Բաֆերսն այս անգամ երկու ձի էր ներկայացրել: Նրա հիմնական մրցակիցը Ուեյն Լուկասն էր՝ մեծատես սեւ ակնոցով այդ անժամ մարդը, որի ձիերը վերջին 10 տարում 3 հաղթանակ են տարել: Շափազանց համառ պայքարում անցած մրցարավում հաղթեց Բաֆերսի երկրորդ ձին՝ Ռիո Կվայերը, իսկ ֆավորիտ Ինդիան Չառլին պարտություն կրեց:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՕԴՈՒՂԻ

Շվեյցարական «Swiss Air» ավիաընկերությունը բացեց Յուրիխ-Երևան-Յուրիխ չվերթը

Մայիսի 5-ին «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կատարեց շվեյցարական «Swiss Air» ավիաընկերության «Cross Air» դուստր ընկերության «MO 83» տիպի օդանավը 47 ուղեւորով (123 նստատեղ): Չվերթերը թեմ է կատարվեն շաբաթական 2 անգամ (երկուշաբթի, հինգշաբթի): «Հայկական ավիաուղիներ»-ի եւ «Cross Air»-ի միջեւ գործում է

«Կոդ շերինգ» պայմանագիրը: Այս կարգի պայմանագիրը նորույթ է «ՀԱՈՒ»-ի համար, իսկ «Cross Air»-ի համար 12-րդն է: Ըստ պայմանագրի երկուսեմ չվերթերը իրականացվելու են միեւնույն օդանավով, այս պարագայում «Cross Air»-ի MO-83 օդանավով, որտեղ «ՀԱՈՒ»-ն ունի 25 նստատեղ: «Այս կարգի չվերթի բացումը խիստ խնայողական է համարվում, իր կարծիքն է հայտնում Cis-ի խորհրդատու գրեգորիոսն՝ Պետեր Լյուրին, Երեւանից Յուրիխ տեղափոխված ուղեւորը հնարավորություն կունենա ճանապարհորդությունը շարունակելու դեպի Լիոն, Մարսել, Բարսելոն, Ստոկհոլմ, Կոպենհագեն: Եվրոպական այս հզոր ավիաընկերությունը կարեւորում է «Զվարթնոց»-ը որպես տարանցիկ կենտրոն, որը Եվրոպան կկապի Արեւելքին: Յուրիխից ժամանած ուղեւորը կարող է իր ճանապարհը շարունակել «ՀԱՈՒ»-ի օդանավերով դեպի Տաշքենդ, Սոչի, Թբիլիսի, Ազգաբաղ: Ինքնաթիռի սպասարկման ծախսերը երկու ավիաընկերությունները հոգում են համատեղ:

Cis ավիաընկերության ներկայացուցիչներին «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին «ՀԱՈՒ»-ի գործադիր տնօրենի պատասխանատու Տիգրան Աչոյանը, գործադիր տնօրենի խորհրդական Հրաչ Ազատյանը, կոմերցիոն տնօրեն Արթուր Զաքարյանը, ՔԱԳՎ պետի տեղակալ Արմեն Տեր-Տաճատյանը:

Չվերթերի բացման պայմանագրի վավերացումը

Վերջին 3-4 ամիսների ընթացքում 4 փուլով վարված բանակցությունները տվել էին իրենց արդյունքները: «Swiss Air»-ը հայտ էր ներկայացրել իրականացնելու մայիս ամսից Յուրիխ-Երեւան-Յուրիխ չվերթը: Նախորդ 4 ամսում ձեռք բերված պայմանավորվածությունները երեկ «ՀԱՈՒ» ա/ը գրասենյակում դրվեցին պատասխանական հիմքերի վրա:

Պայմանագրի իմաստը հետեւյալն է. «ՀԱՈՒ» եւ «Swissair» ավիաընկերությունները հունիսի 2-ից սկսելու են կոդերի համակցված չվերթ:

Հատուկ սակագների պայման-

ներում են իրականացնելու չվերթերը: «ՀԱՈՒ»-ի գոյության 5 տարում սա առանձին ինքնատիպ համագործակցությունն է, որը օգտակար է ավիաընկերության համար նաեւ այն առումով, որ արդեն իսկ լուծվում է մեզ համար կարեւոր օդանավի հարցը: Յուրիխ-Երեւան-Յուրիխ չվերթի բացման պայմանագիրը վավերացվեց «ՀԱՈՒ»-ի գործադիր տնօրենության Տ. Աչոյան, Հ. Ազատյան, Ա. Զաքարյան, եւ «Swissair» ա/ը գործադիր մենեջերներ Ռուդի Շուսմախերի, Հայնց Շրուրցենեգերի կողմից:

ԱԼԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՕՐ

«Երկրապահը» շնորհավորեց հայ լրագրողներին

Մայիսի 3-ը մամուլի ազատության համաշխարհային օրն է, եւ երեկ արտահերթ խորհրդարանական նիստի ընդմիջմանը ԱԺ «Երկրապահ» խումբը հայ լրագրողներին շնորհավորեց՝ մամուլի ազատության առիթով ոչ միայն բառացի, այլեւ փաստացի: Լրագրողները հրավիրվեցին ավանդաբար զուտ աշխատանքային՝ ծեղագրույցների տրահ, ուր, սակայն, սեղաններին շամպայն էր, միրգ եւ խաղրեղեն: Ամենամարտունակը համարվող «Երկրապահը» լրագրողներին հավաստեց իր հարգանքի հավաստիքը: «Երկրապահ» խմբի նախագահ Սմբատ Այվազյանը գրեթե գինեծոն ուղղեց մամուլին. «Դուք այն մարդիկ եք, որոնց հետ մենք մեծ հույսեր ենք կապում: Չորրորդ իշխանությունն այն ուժն է, որը մեզ կարող է առաջ տանել կամ սպիտել դոփել տեղում: Ձեր շնորհիվ մենք եւ ամբողջ իշխանությունը սպիտված ենք մտածել մեր երկիրն ավելի լավ կառավարելու մասին: Որքան շատ գրեք՝ այնքան ուժեղանալու ենք»: Սերգո Երիցյանը՝ որպես եւ երկրապահ, եւ լրագրող, չորրորդ իշխանությունը համարեց բանալի. «Քննադատություն լինի, գովերգում, թե բանվեճ, դա մեր մասնագիտական պարտքն է»: Լրագրողները զվարթ էին, բայց անկեղծ՝ ուզենք, չուզենք, միեւնույն է, գրելու ենք ձեր պառակտումների, հակասությունների մասին: Կոնյակի գործարանի երկրապահ տնօրեն Ալբերտ Հերոյանը լրագրողներին եւ երկրապահներին առաջարկեց երկրորդ հանդիպումը՝ մայիսի 28-ին Հայաստանի Առաջին Հանրապետության տարեդարձի նախօրեին: Ն. Դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 1998-1999 ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով՝

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համապատասխան ֆինանսավորման դեպքում, ընդունելություն կլինի նաեւ հետեւյալ ծրագրերով՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Բարձրագույն կրթությունը և անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **մայիսի 8-ը, ժ. 15⁰⁰**:

Տեղեկությունների համար դիմել՝
Երևան, Մարշալ Բաղրամյան 40
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ընդունելության գրասենյակ (19)
Հեռ. 27-16-29

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան ընկերությունը աշխատանքի է հրավիրում աշխատասեր եւ աչալուրջ մարդկանց (ցանկալի է բարձրագույն կրթությամբ):

Տեղերը սահմանափակ են:

Հարցազրույցը կկայանա ուրբաթ, Վարդանանց նրբ. 8, «Հայկոմունինախագիծ» դահլիճ (Կինոյի տան մոտ):

Դիմել՝ Գեղամին

USA

Ժողովրդավարության եւ զարգացման հիմնադրամ

Դպրոցներում անհատական կաթսայատներ, ջեռուցման ցանցի տեղադրման ծրագիրն իրականացնելու նպատակով պահանջվում է տեխնիկական խորհրդատու-ջեռուցման համակարգերի մասնագետ:

Պահանջվող տվյալները.
- Բարձրագույն տեխնիկական կրթություն վերոհիշյալ ոլորտում
- Պրակտիկ փորձ կաթսաների մոնտաժման, տեղադրման եւ այլ աշխատանքներում վերջին 4-5 տ. ընթացքում
- Ցանկալի է գիտական աստիճան, օտարերկրյա կազմակերպությունների հետ աշխատանքային փորձ եւ անգլերենի իմացություն

Ներկայացնել
Անձնագրային տվյալները, բուհի դիպլոմի պատճենը, վերջին 4-5 տարիների ընթացքում կատարված աշխատանքների ցուցակ-նկարագրությունը (2 էջից ոչ ավելի):
Դիմել մինչեւ 10. 05. 98 թ.
24բ Մ. Բաղրամյան պ/Հ 9. Ա. մաթեմատիկայի ինստիտուտ 1 հ./ հ. 52-03-17 /274852/

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տրվում է վարձով մեկ սենյականոց բնակարան, մեծ, բաց պատշգամբով, մշտական ջրի հոսքով:
Արշակունյաց 8 շ. բն. 21, 2-րդ հարկ: Հեռ. 56-85-29

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

կիսանկուղային տարածք 132,6 քմ. ընդհանուր մակերեսով, վերանորոգված, ունի սանհանգույց:
Հասցեն՝ Նալբանդյան 29:
Տեղեկությունների համար զանգահարել 57-16-16 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

5 սենյականոց բնակարան
Արցախի փողոց շ. 8Ա, բն. 44
Հեռ՝ 44-72-85, 44-71-45

JOB OPPORTUNITY

OPENING DATE: April 30, 1998
POSITION TITLE: Economic/Commercial Assistant (U. S. State Department)
GRADE: 7
ENTRY/TRAINING GRADE LEVEL: 6 (during six months minimum)

SUMMARY OF DUTIES: Performs a variety of U. S. business promotion duties in the Embassy's Commercial Section under the direction of the FCS Commercial Specialist and general supervision of the Embassy's Economic/Commercial Officer. Main activities will include processing of trade related correspondence, gathering and analyzing information on Armenia's market and economic/business environment, and maintenance of the Commercial Library. Additional duties will include making and maintaining contacts, drafting commercial reports, selecting candidates for business training programs, working with U. S. and Armenian visitors, and translation/interpreting. Must follow all Embassy's commercial activities and be able to substitute FCS Commercial Specialist in his absence.

QUALIFICATIONS:

- University degree in economics or market research/business administration required. Tree full years of progressively responsible related experience may be substituted;
- Two years of progressively responsible job-related experience in economic, market research, trade promotion, business administration or other closely related fields is required;
- Excellent knowledge of English and Armenian is required, knowledge of Russian is an asset;
- Must have professional style writing and typing skills (in English) and be able to professionally operate basic PC office software- Word, Excel.

WHO MAY APPLY: Any person, who believes she/he meets the above qualifications.
ANNOUNCEMENT CLOSURE DATE: May 14, 1998
HOW TO APPLY: Please complete an "Application For Employment" form which is available from the American Embassy Guard Office or the Embassy Receptionist located at 18 Baghramian Street, Yerevan.

Ուզո՞ւմ եք նիհարել

անվնաս, առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:
Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով
52-93-53
ժամը 9-18-ը

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 815 Տպաքանակը 3500 Ստորագրված է տպագրության 5 05 1998 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@